

ՀՅԴ Պատմութիւն



ԴՐՕՇԱԿ





Հոկտեմբեր N10 (1613)

2009

ԴՐՕՇԱԿ

ՀՅԴ Պատմութիւն

ԴՐՕՇԱԿ

ՀՅԴ Պատմական աթերթ

"Դրօշակ"
ամենամյա պաշտոնաթերթ
Հայ Հեղափոխական Դաշնակցության

Հիմնադիր՝ **ՀՅԴ**

Գլխավոր խմբագիր՝
Ռուբեն Հովսեփյան

Խմբագիր՝ **Կ. Խանլարյան**
Համակարգչային շարվածքը՝
Ս. Խաչատրյանի
Ձեւավորումը՝ **Մ. Հովսեփյանի**

Ոճը՝ **Ս. Փարթամյանի**

Գրանցման վկայական 897

Երեւան,375010,Միհր Մկրտչյան 12/ 1
Հեռ. 521 876
էլ.փոստ.droshak@ arf.am

Տպագրությունը՝ «Բավիղ» ՍՊԸ-ի

"Droshak" monthly,
ARF dashnaktsoutiun publication

Editor-in-Chief: **Rouben Hovsepian**

12| 1 Mher Mkrtchian,Yerevan,375010
Tel. 521 876
e.mail:droshak@arf.am

Խմբագրական

Նախասոնրագրումից՝ սոնրագրում, սոնրագրումից...
համակարգային իշխանափոխություն 2

Հարցազրույց

Պահանջատիրության
հանգրվանները հաղթահարվում են ազգովին 4

Հայ դաս

Հայաստանի անկախության պատերազմը (1918 թ.).
Բաֆվի էպոպեան 9

ՀՀ Ազգային ժողով

Պաշտպանենք մեր զինանշանը օրենքի ուժով 16

Պատմաբանական

ՀՅԴ մասնակցությունը 1910 թ. Կոպենհագենի
միջազգային սոցիալիստական կոնգրեսին 19

Անտիպ էջեր

Էդիկ Յովհաննէսեան՝ Ղարաբաղեան
պոռթկումը, սփիւռքը, Միւնխենի մեր կեդրոնը 28

Մշակույթ

Հեղափոխական երգը որպես հայ մարդու
հոգու արտացոլում 33

Տեղեկանք

Վեց օր Արարատի գագաթին 39

«Դրօշակ»-ը 100 տարի առաջ

Ե. Ընդհանուր Ժողովը 45

Նոր գրքեր

ՀՅԴ Կ. Պոլսի պարբերական մամուլը
(1909-1924թթ.) 46

Պատկերասրահ

Ռուբեն Ադալյան 48

Հ.Յ.Դ. ԲԻՒՐՈՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ
A.R.F. BURO LIBRARY

Digitized by ARF PR Office

Նախաստորագրումից՝ ստորագրում, ստորագրումից... համակարգային իշխանափոխության

2009թ. հոկտեմբեր 10-ը, անտարակոյս, մտաւ մեր նորագոյն պատմութեան մէջ, որպէս սեւ էջ: Այս խայտառակ էջի մասին դեռ երկար կը յիշեն մեր սերունդները: Սակայն մեր պարտքն է անմիջապէս արբագրել այն եւ այնպէս արբագրել, որ մեր սերունդները յիշատակելով ազգային արժանապատուութիւնը վիրաւորող այս խայտառակութիւնը, գոնէ չկրեն դրա աղետաբեր հետեւանքները:

Արձանագրութիւնների ստորագրութեան իրողութիւնը ամրագրեց մի քանի կարեւոր հարց.

ա. Հայ-թուրքական յարաբերութիւնների կարգաւորման ողջ գործընթացը առաջնորդւում եւ վերահսկւում է ԱՄՆ-ի կողմից: Իսկ ՌԴ-ն եւ Ֆրանսիան բնաւ էլ լուռ դիտորդի դերում չեն: Թւում է, թէ աշխատանքի մի շատ պարզ բաժանում է կատարուել, համաձայն որի՝ հայ-թուրքական յարաբերութիւնների կարգաւորումը յանձնուել է ԱՄՆ-ին, հայ-ադրբեջանականը՝ Ռուսաստանին, իսկ Սարկոզիի Ֆրանսիան էլ, հաւանաբար, մօտ ապագայում տնօրինելու է Թուրքիա-Հայաստան-Ադրբեջան կազմաւորուած «բլոկ»-ի ապագայ կարգավիճակը ԵՄ-ում...

բ. Հայ-թուրքական յարաբերութիւնների այս գործընթացը բացայայտօրէն անբնական ձեւաչափ ունի: Համեմատելով ստորագրուած արձանագրութիւնները այլ պետութիւնների եւ ՀՀ միջեւ ստորագրուած ակտերի եւ կոնվենցիաների հետ, նկատելի է դառնում խնդրոյ առարկայ փաստաթղթերի անբնականութիւնը: ՀՀ-ն միւսների հետ միջպետական կապեր հաստատելու մասին պայմանագրեր կնքելուց առաջ, յաճախ մի քանի տարուայ տեւողութեամբ, բազմիցս մանր ու խոշոր համաձայնագրեր է ստորագրել, որոնցում ընդհանրապէս բացակայում է, մանաւանդ, սահմանների անխախտելիութեան եւ տարածքների ամբողջականութեան ճանաչման կամ յարգման որեւէ նշում: Իսկ պայմանագրերի դէպքերում, օրինակ՝ Ֆրանսիայի հետ միջպետական պայմանագրում, այդպիսի սկզբունքներ չեն ամրագրուել: Այս իմաստով, եթէ նոյնիսկ մի պահ մոռանանք ռազմավարական, քաղաքական եւ բազում այլ կնճիռները, հայ-թուրքական ստորագրուած արձանագրութիւնների այս համապարփակութիւնը, դիւանագիտական կապերից մինչեւ գոյութիւն ունեցող սահմանի (Թուրքիա-ԽՍՀՄ սահման) իրաւական ճանաչման ու բարի դրացիականութեան սկզբունքներն ընդգրկող բազմաշերտութիւնը հնարաւորութիւն է տալիս եզրակացնելու, որ փաստաթղթերի այս եղանակով պարտադրումը երկու հաւանական նպատակ կարող է ունենալ՝ կամ շատ թռիչքային ժամանակամիջոցում բացել սահմանը, կամ էլ, առհասարակ, փակել

հայ-թուրքական միջպետական յարաբերութիւնների էջը: Երկու հաւանական նպատակներն էլ չեն համընկնում մեր ազգային եւ պետական շահերին:

գ. Անհեթեթութիւն է ստորագրուած արձանագրութիւնների կոմպրոմիսային լինելու հեքիաթը: Թուրքիայի կողմից դեռ 1991 թ. առաջ էին քաւում սկզբում երկու, ապա երեք նախապայմաններ՝ նորանկախ Հայաստանի հետ յարաբերութիւնների նորմալացման համար: Ստորագրուած արձանագրութիւններում, քողարկուած կամ անթաքոյց, առկայ են երեք նախապայմաններն էլ: Եթէ երեքից մէկը կամ նոյնիսկ երկուսը լինէին արձանագրութիւններում, ապա կարելի կը լինէր ասել, որ տեղի է ունեցել փոխզիջում: Տարական թուաբանութիւնն անգամ ցոյց է տալիս, որ ոչ մի կոմպրոմիս էլ տեղի չի ունեցել: Այստեղ կայ միայն հայկական կողմի կատարեալ զիջումը:

դ. Լեգիտիմութեան տգնապով տառապող իշխանութիւնները հետզհետէ ենթարկւում արտաքին ճնշումներին: Մեր պարագայում այս հարցն արդէն թողնում է իր խիստ բացասական հետեւանքները: Պէտք է այս հանգամանքը ուշի ուշով հաշուի առնել ապագայում ոչ միայն հայ-թուրքական հարցի նորանոր զարգացումների դէպքում, այլ նաեւ՝ հայ-ադրբեջանականի: Պնդումները, թէ իբր պետական տարածքների, բնակչութեան, աշխարհագրական դիրքի եւ ռեսուրսների տեսակէտից Թուրքիայի եւ Հայաստանի անհամեմատելիութեան պայմաններում, լեգիտիմութեան գործոնը կորցնում է իր նշանակութիւնը: Փորձում են համոզել մեզ, թէ հայկական կողմը լեգիտիմ լինի կամ ոչ, ամէն դէպքում, ենթակայ է դառնում ճնշումների: Սա սխալ տրամաբանութիւն է եւ յատկապէս չի գործելու վաղը՝ հայ-ադրբեջանական յարաբերութիւնների կարգաւորման պարագայում, որ նշուած առումներով համեմատելի են երկու կողմերը: Սակայն այնտեղ եւս արդէն նկատելի է, որ ռազմականապէս յաղթանակած հայութեանը, շնորհիւ իր իշխանութիւնների անճարակութեան, պարտադրւում են դիւանագիտական պարտութիւններ:

ե. Հայկական ներկայիս դիւանագիտութիւնը ապաշնորհ է ու անկարող: Այս պարզ ճշմարտութեան մասին արդէն շատ է խօսուել ու գրուել: Չզարմանամ յանկարծ, եթէ վաղը մի իշխանամէտ թերթ, լրատուամիջոց կամ հեռուստալիք, որպէս հակացոյց, սկսի յոխորտալ այն մասին, թէ տեսնո՞ւմ էք՝ Սոլանան աւելի ջերմ էր Նալբանդեանի հետ, քան Դաւութօղլուի, որ տիկին Քլինթոնը Նալբանդեանին է կանչում իր առանձնասենեակը եւ ոչ թէ Դաւութօղլուին, եւ այլն եւ այլն...

զ. Վեց շաբաթների ընթացքում Երեւանում, Փարիզում, Նիւ Եորքում, Լոս Անջելեսում, Բեյրութում եւ Դոնի Ռոստովում տեղի ունեցած ցոյցերը, հացադուլները, բողոքի այլ դրսեւորումները, ինչպէս նաեւ Երեւանի «Ոչ»-ի երթը եւ հանրահաւաքը, գերազանցապէս ապացուցեցին, որ չկայ Հայաստան-սփիւռք հակադրութեան խնդիր, ինչը սիրում են կրկնել իշխանութիւններն ու ՀՀԾ-ն, այլ կայ մի կողմից հայութեան՝ ի Հայաստան եւ ի սփիւռս աշխարհի, եւ միւս կողմից ՀՀ իշխանութիւնների սկզբունքային տարակարծութիւն՝ պարտադրուած ստորացուցիչ պայմանների կապակցութեամբ:

է. Հայաստանի իշխանութիւնների համար հանրային կարծիքը առաջնային չէ եւ, ամէն դեպքում, երկրորդական, երրորդական կամ չորրորդական նշանակութիւն էլ չունի: Կարծում ենք, որ Հայաստանի եւ սփիւռքի հայութեան մասնակցութեամբ կազմակերպուած քննարկումները հենց արտաքին աշխարհի աչքին փոշի փչելու մտադրութեամբ կատարուած ձեւական քայլեր էին:

«Դրօշակը» դեռ 2009 թ. յունիսի խմբագրականում գրել է. «Աչալուրջ հետեւողականությամբ, մշտապէս պէտք է ուշադրութեան կիզակէտում պահել ՀՀ դիւանագիտական կորպուսի քայլերը՝ մեզ յուզող բոլոր ոլորտներում, մանաւանդ հայ-թուրքական եւ հայ-ադրբեջանական յարաբերութիւններում: Եթէ գործընթացները բախուեն մեր դիտանկիւնից բնորոշուած ազգային եւ պետական շահերին, ապա պէտք է հնարաւոր ամեն բան անել կասեցնելու դրանք, ընդհուպ մինչեւ գործադիր իշխանութեան հրաժարականի հարցի բարձրացումը: Սա նշանակում է, որ Դաշնակցութիւնը, առաւել թափով, շարունակելու է արթուն պահակի եւ առողջ քննադատողի իր դինամիկ կեցուածքը»:

Այս առաքելութիւնն ենք կրում նաեւ այսօր: «Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը,- ասում է ՀՅԴ 2009 թ. հոկտ. 12-ի յայտարարութեան մէջ,- վճռական է արձանագրութիւնների վաւերացումը ձախողելու պայքարում: Այդ նպատակի համար Դաշնակցութիւնը կը դիմի քաղաքական եւ սահմանադրական բոլոր միջոցներին՝ ընդհուպ մինչեւ իշխանափոխութիւն»:

Պահանջատիրության հանգրվանները հաղթահարվում են ազգովին



«Դրօշակ»-ի հարցերին պատասխանում է ՀՅԴ Բյուրոյի անդամ, Սոցիալիստական Ինտերնացիոնալի փոխատենապետ Մարիո ՆԱԼԲԱՆԴՅԱՆԸ

- Հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման ներկա գործընթացի լույսի տակ կարելի՞ է տրամաբանորեն հանգել այն բանին, որ Հայկական հարցի լուծումը մտնում է նոր փուլ: Եթե հայությունը, ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի, իր արդար դատի լուծման ճանապարհին կորցնի հավատը սեփական պետության հովանավորությամբ իր խաղաղ կյանքն ապրելու և բնականոն զարգացումն ապահովելու ուղղությամբ, ի՞նչ կանխատեսելի սկզբունքներով է առաջնորդվելու այսուհետ: Դուք ինչպե՞ս եք տեսնում մեր պահանջատիրական պայքարի ապագան:

- Անշուշտ մեր պահանջատիրության և պայքարի տեսանկյունից մենք նոր փուլ ենք մտնում: Մեզ համար հստակ էր միշտ, որ Հայկական հարցի լուծումը պետք է լիներ հանգրվանային: Հայաստանի վերանկախացումից հետո մենք ոչ դրեցինք այդ երկար ճանապարհի այն փուլը, որ նշանավորվեց Արցախի ազատամարտում մեր հաղթանակով ու Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախացումով: Սա ես համարում եմ մեր պա-

հանջաՏիրական պայքարի կարևորագույն հանգրվան և իրականացումը ՀՅ Դաշնակցության բարձրագույն իղձերից մեկի, որին մենք կարողացանք հասնել ազգովին: Ցավով պետք է նշեմ, որ հայ-թուրքական արձանագրությունների ստորագրմանն ի հետևանք մենք անխուսափելիորեն հայտնվել ենք մի նահանջի առջև, ինչը մեզ շատ է մտահոգում, որովհետև դրա մեջ մենք տեսնում ենք մեր ազգային իրավունքների զիջումը: Չնայած, որ մենք կարողացել ենք արցախյան ազատամարտում հաղթանակներ ու հաջողություն արձանագրել, այսօր, գոնե մեզ համար անհասկանալի պատճառներով, կարծես դուրս ենք մնում ազգային նպատակների իրագործման նախատեսված, ավելի ճիշտ՝ նախագծված ճամփից, և իշխանություններն առանձին, իրենք իրենց համար, գծել են մեկ այլ քարտեզ, այդ քարտեզը վերածել են պետական քաղաքականության, և մեզ կանգնեցրել ստորագրված արձանագրությունների փաստի առջև: Այդ արձանագրությունները մեզ համար բացարձակապես անընդունելի են, մենք մերժում ենք դրանց բովանդակությունը և, միևնույն ժամանակ, մտահոգ ենք, որ արձանագրությունների պատճառով հետագայում խնդրո առարկա կդառնա ոչ միայն ազգային իրավունքների համար մեր պահանջատիրությունը, այլև Հայաստանի, իբրև պետության, միջազգային վարկը, ինչն անհերքայորեն կորուստներ է արձանագրելու: Ես գիտեմ, որ շատ մարդիկ, ովքեր հայ ժողովրդի հանդեպ մեծ հարգանք ունեին այն բանի համար, որ մեր ժողովուրդը 90 տարի շարունակ կարողացել է ձևավորել իր պահանջատիրությունը ազգային մեկ ձեռագրով, այսօր տարակուսած են, որ Հայաստան պետությունն է հարվածում այդ ազգային ծրագրին: Իմ տեսանկյունից մենք գտնվում ենք մեզ համար ոչ պատվաբեր մի պարտության նախաշեմին և կցանկանայի, որ իշխանությունները վերանայեն իրենց այդ ընթացքը, որովհետև դա կործանարար ընթացք է:

- Ստեղծված իրավիճակի լույսի տակ ինչպե՞ս եք վերլուծում անկախության գաղափարի, իրավական պետություն և ժողովրդավարություն հասկացությունների ներքին փոխկապակցվածության հարցը:

- Ժողովրդավարությունն այնպիսի հասկացություն է, որ ամեն մի պետություն, եթե ցանկանում է ապրել ժողովրդավարության պայմաններում, պետք է այն սկսի իրագործել ժամանակի ընթացքում: Անկախության ձեռք բերումը դեռևս չի նշանակում, թե դու նաև ժողովրդավարություն ես ձեռք բերել: Դա գործընթաց է և ունի դրսևորման շատ ձևեր, որոնցից յուրաքանչյուրը պետք է իրագործվի կյանքում, որպեսզի դու կարողանաս այդ ճանապարհի վերջում հայտարարել, որ այլևս գտնվում ես ժողովրդավարական կարգերում: Անկախությունն ինքնին չի կարող ժողովրդին բարեկեցություն ապահովել: Այդ բարեկեցությունը նույնպես շատ կողմերով պայմանավորված է ազատ ու անկաշկանդ կյանքով, որ նույնպես ձեռք է բերվում պայքարի արդյունքում: Իսկ ազատ ու անկաշկանդ կյանք, առանց ժողովրդավարական հիմնարար սկզբունքների կիրառության, հնարավոր չէ պատկերացնել: Խոսքի և մամուլի ազատությունները պետք է դառնան այն կռվանները, որոնց վրա հնարավոր կլինի կառուցել ժողովրդավարություն: Եթե դու ժողովրդավարության կառուցման ճանապարհին արգելքներ ես ստեղծում, շրջափակում ես մամուլը, կամ չես թողնում, որ ժողովուրդը լիարժեքորեն հասկանա, թե ինչ է տեղի ունենում, դու տկարացնում ես ժողովրդավարությունը: Ժողովրդավարության տկարացումը, ինքնաբերաբար, բերում է նոր խնդիրներ: Իշխանություններն ստիպված դառնում են ավելի ամբողջատիրական, ձեռք են բերում բռնատիրական տարրեր, որպեսզի կարողանան մի կողմից ժողովրդին զսպել, իսկ մյուս կողմից իրագործել իրենց ծրագրերը: Այս հակադրությունն է, որ մենք այսօր տեսնում ենք, որի մեջ ենք հայտնվել Հայաստանում: Սա վտանգներով լեցուն իրավիճակ է, որից միակ ելքն այն է, որ Հայաստանը վերադառնա ժողովրդավարության իր բռնած ուղին: Նախ՝ հարկավոր է երբք իշխանությունների հստակ տարանջատում, և ապա՝ մամուլի և խոսքի ազատություն, որպեսզի ժողովուրդը կարողանա սեփական կամքով կողմնորոշվել և ո-

Մարիո Նալբանդյանը ԱՄՆ փոխնախագահ Ջո Բայդենի հետ, 2009 թ. Մարտին

ռոումներ կայացնել: Այդ ամենն այսօր չկա Հայաստանում և մենք ականատեսն ենք այն տխուր իրողության, որ իշխանությունները նույնիսկ ազգային կարևորագույն հարցերում են սխալներ թույլ տալիս:

- Ներքաղաքական դաշտում ասիճանաբար ձևավորվում է ազգային բևեռ կամ ազգային ճակատ: Ձեր կարծիքով՝ մի շարք տարաբնույթ քաղաքական կուսակցություններով համալրված այսպիսի մի ճակատ անհրաժե՞շտ է, որ օժտված լինի սոցիալական ինչ-որ մինիմում ծրագրերով ու առաջադրանքներով:

- Ես այն համոզումն ունեմ, որ երբ երկիրը գտնվում է տնտեսական լուրջ ճգնաժամի առջև, նրա համար շատ դժվար կլինի միայն մեկ կուսակցության, մեկ քաղաքական ուժի ջանքերով հաղթահարել ճգնաժամը: Սա անվիճելի ճշմարտություն է և այս առումով Դաշնակցությունը միշտ բաց է եղել, պատրաստ համագործակցելու, իսկ եթե հարկ է՝ նաև ճակատ կազմելու այլ կուսակցությունների հետ, որոնք այս կամ այն չափով ունեն ընկերային ուղղվածություն: Մենք այսօր գտնվում ենք մի այնպիսի իրավիճակում, որ երկրի առաջադիմության խնդիրների լուծման համար, եթե ոչ ճակատ, ապա գոնե սոցիալական մինիմում ծրագրերի շուրջ քաղաքական որոշ ուժերի մի համախմբում է անհրաժեշտ: Անձնական համոզումս այն է, որ երկրի առաջադիմական և ընկերային արդարություն պահանջող կուսակցությունները պետք է փնտրեն համագործակցության նույնիսկ նվազագույն կարելիությունները, որովհետև մեր առջև ծառացած դժվարությունները այնպիսի խորություն և տարողություն ունեն, որոնք մեզ ստիպում են մտածել ազգովին: Այդ կերպ միայն մենք կկարողանանք հաղթահարել համաշխարհային տնտեսական ճգնաժամի հետևանքները: Ճակատի ձևավորումն արդեն ժամանակի խնդիր է և կապված է ընտրական ծրագրերի ու ծրագրային հարցերի հետ: Իսկ ինչ վերաբերում է կարևորագույն խնդիրների շուրջ համախմբվելուն, դա արդեն հրամայական է:

- Ինչպիսի՞ տեղ ու դեր կբնորոշեք ՀՅ Դաշնակցության համար Հայաստանի քաղաքական դաշտում՝ նկատի առնելով նրա սոցիալիստական գաղափարախոսությունը:

- Ես կարծում եմ, որ Դաշնակցության առջև աշխատանքի մի հսկա դաշտ կա այսօր, ինչը և նա փորձ է անում ինչ-որ ձևով զբաղեցնել: Սակայն մեր ուժերի անբավարարությունը և այն անարդար իրավիճակը, որի մեջ գտնվում են հայ ժողովրդի հիմնական շերտերը՝ հասարակության մեծ մասը, մեզ խանգարում են անհրաժեշտ արդյունք ապահովել: Մենք արդեն իսկ այդ գործընթացի մեջ ենք և պետք է զորացնենք այդ աշխատանքը, պետք է որդեգրենք նոր

ծրագրեր, փորձենք նպաստել ժողովրդի անմիջական հոգսերի և խնդիրների լուծմանը: Իբրև ընդդիմություն, որպես մի կուսակցություն, որ ձգտում է ընկերային արդարության, մենք պետք է նաև հսկիչ լինենք, որ իշխանություններն իրենց հերթին գործադրեն այն բոլոր օրենքները, որոնք միտված են հասարակության մեջ ընկերային արդարության վիճակի բարելավմանը: Մեր խորհրդարանական խմբակցության ճամփով մենք պահանջատեր պետք է լինենք և իշխանություններին նույնիսկ պարտադրենք կյանքում իրագործել այդ օրենքները, որոնք կան, ստեղծվում են, բայց մնում են միայն թղթի վրա: Մենք, որպես պետականության հանդեպ պատասխանատվություն ունեցող ընդդիմադիր կուսակցություն, մեկ ուրիշ պարտականություն ևս ունենք: Այն է՝ հետևել և իշխանություններին պարտադրել կյանքի կոչել ընկերային կյանքի բարելավմանն ուղղված հենց իշխանական ծրագրերը: Այսօր մենք տեսնում ենք, օրինակ, որ հանրային փոխադրումների կամ հանրային ծառայությունների բնագավառում ժողովուրդն անընդհատ հայտնվում է տուժողի դերում այն պատճառով, որ իշխանությունները տարբեր մակարդակներում, տարբեր օղակներում իրենց պարտականությունները չեն կատարում ինչպես հարկն է: Մենք այս հարցերում ևս անելիք ունենք, որովհետև մենք պետք է դառնանք ժողովրդի իղձերը, նաև դժգոհությունը արտահայտող կուսակցությունը:

- Հայ ընթերցողը քաջատեղյակ է, որ ՀՅԴ-ն հեխխորհրդային տարածքի երկրները ներկայացնող այն եզակի կուսակցությունն է, որ Սոցինտերնի լիիրավ անդամ է: Հայ դատի, Արցախի հարցի լուծման և վերջապես արդեն ստորագրված հայ-թուրքական արձանագրությունների համատեքստից ելնելով՝ կփոխվե՞ն, արդյոք, համագործակցության ուղղություններն ու շեշտադրումները, և այն հարցերը, որոնք մինչ օրս ՀՅԴ-ն բարձրացնում էր Սոցինտերնում, նույն ընկալումը կունենա՞ն արդյոք գործընկերների կողմից:

- Պարզ է, որ արձանագրությունների ստորագրությունից հետո, ինչպես ամենուր, այնպես էլ Սոցինտերնի կուսակ-

ցություններ մեջ, մի շարք հարցեր են առաջանալու: Տարիների ընթացքում միջազգային այս բեմում իր հաստատուն տեղն ունեցող մեր կուսակցությանը հաջողվել էր համաշխարհային հանրությանը ծանուցել Հայ դատը և Արցախի ժողովրդի ազատ ինքնորոշվելու իրավունքը: Մենք կարողացել էինք նաև համաշխարհային հանրությանը ճշտորեն փոխանցել Հայոց ցեղասպանության դատապարտման գործընթացի խորհուրդը և նույնիսկ ԼՂՀ անկախության իրավական հիմքերը: Հետևաբար, բնական է, որ այս արձանագրությունների ստորագրումից հետո, մեր գործընկերների մեջ հարցեր, այնուամենայնիվ, կառաջանան՝ կապված Հայաստանի Հանրապետության իշխանությունների վարած քաղաքականության հետ, և դա կդիտվի որպես մի հետքայլ: Նրանցից շատերն այս փաստը կդիտեն որպես հայ ժողովրդի կողմից նահանջ իր պահանջատիրությունից: Մեր գործը, ինչպես ասում են, դժվարացավ: Սկսվում է նոր փուլ, և մենք պետք է կարողանանք այսուհետև ճիշտ մեկնաբանել իրողությունը, որպեսզի մեր գործընկերների կողմից ճիշտ ընկալվենք և ծայրահեղական որոշ կուսակցությունների նման տպավորություն չթողնենք, թե դեմ ենք ամեն ինչի: Սակայն, համոզված ենք, որ լրջորեն աշխատելով, կկարողանանք հետագայում վերականգնել հայ ժողովրդի իրավունքների ճիշտ պատգամը և տեղը:

- Ֆինանսական համաշխարհային ճգնաժամի պայմաններում, առհասարակ, քաղաքական ի՞նչ դիրքերում են գտնվում սոցիալիստական, սոցիալ-դեմոկրատական և լեյբորիստական կուսակցությունները, և ի՞նչ դերակատարում է սպասվում նրանցից:

- Ձեզ հայտնի է, որ համաշխարհային ֆինանսական այս տագնապը հիմնականում արդյունք է սանձարձակ ֆինանսական աշխարհի գործունեության: Ֆինանսական սանձարձակ քաղաքականությունը աշխարհը վերածեց մի մեծ խաղասրահի, որտեղ ֆինանսական տնտեսությունը միայն իր շահերն էր հետապնդում: Ընկերվարական ուժերը ժամանակին զգուշացրել էին, որ ֆինանսական տնտեսության մեջ հարկավոր է կարգավորման մեխանիզմներ ներառել և օրենքներ կիրառել, որպեսզի հնարավոր լիներ կանխել իրադարձությունների այս ընթացքը: Մենք տեսանք, որ ֆինանսական համաշխարհային կենտրոնները ձախողվեցին, այսինքն նրանց տեսական ու գործնական աշխատանքը փուլ եկավ, բանկային համակարգը տապալվեց, և ինքնաբերաբար իր հետևից տարավ տնտեսական համակարգը: Այսօր ընկերվարական կամ սոցիալ-դեմոկրատական կուսակցությունները պնդում են, որ պետք է նոր ցանցեր կամ զսպաններ դրվեն այն գործընթացների համար, որ տեղի են ունենում ֆինանսական աշխարհում և բանկերի միջև: Սա հիմնականն է: Նաև պետք է ապահովվեն մի շարք միջոցառումներ, որպեսզի պետությունը կարողանա տվյալ երկրի մեջ տնտեսական զարգացումներին միջամտելու որոշ իրավունքներ վերապահել իրեն: Մինչև օրս իշխող լիբերալ հասկացողությունների համաձայն պետությունը պետք է մի կողմ քաշվեր տնտեսական և ֆինանսական աշխարհից և թույլ տար, որպեսզի ազատ շուկան իր օրենքներով գտներ միջին մի վիճակ: Սակայն այս հասկացությունը երբեք ընդունելի չէր առաջադիմական աշխարհի կողմից: Ճգնաժամը մեկ անգամ ևս ապացուցեց, որ միայն շուկայի օրենքներին ապավինելը ճիշտ ճանապարհը չէ նորմալ, համաչափ զարգացում ապահովելու համար: Սա նշանակում է, որ պետությունն, այնուամենայնիվ, պետք է դերակատար լինի և կարողանա հավասարակշռություն տարածել շուկայի օրենքների վրա, դուրս բերի շուկան սանձարձակ ֆինանսական աշխարհի ուղղակի ազդեցություններից: Կան այնպիսի ոլորտներ, ինչպիսիք են առողջապահությունը, սոցիալական ապահովությունն, կրթությունն, որտեղ վերահսկողության լծակները պետությունը պետք է իրեն վերապահի: Մենք արդեն տեսնում ենք, որ աշխարհի շատ մեծ ու հզոր պետություններ հենց պետության միջոցով ու աջակցությամբ է, որ փորձում են հաղթահարել ճգնաժամի հետևանքները:

- Շնորհակալություն:

«Դրօշակ»

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ (1918 Թ.) ԲԱՔՎԻ ԷՊՈՊԵԱՆ

Լևոն Շիրինյան

Գնահատելով հայ ժողովրդի՝ Առաջին աշխարհամարտի տարիներին խաղացած դերը «հասարակաց թշնամու» (թուրք-գերմանական բլոկ) դեմ տարած հաղթանակում, Ջեյմս Ջերարդը (ԱՄՆ-ի դեսպանը Գերմանիայում) ԱՄՆ-ի կառավարությանը ներկայացրած 1919 թվականի հունվարի 7-ի տեղեկագրում ասում էր. «Ամերիկացիք պետք է մի վայրկյան կանգ առնեն և խորհեն, թե ինչ կլիներ պատերազմի ելքը և տևողությունը արևմուտքում, եթե թուրքերը ութ ամիս առաջ հասնեին Բաքու: Եվ նրանք ավելի կանուխ կհասնեին, եթե հայերը չդիմադրեին»: Ավելի հեղինակավոր է և տպավորիչ գեներալ Էրիխ ֆոն Լյուդենդորֆի, գերմանական բանակի փաստացի ղեկավարի, խոստովանությունը. «Գլխավոր ազդակը, որ առաջ բերեց գերմանական արևմտյան բանակի խորտակումը, վառելանյութի պակասն էր, որովհետև թուրքերը չկարողացան ժամանակին գրավել Բաքուն, և հայերն էին, որ թուրքերին արգելք եղան Բաքուն գրավելու ժամանակ»: Եվ այն ռազմաճակատը, որ «Սև ծովից մինչև Մոսուլ երկարող գիծն էր», վճռում էր ոչ միայն Հայաստանի ապագան, գնահատում է հանրաճանաչ Վիկտոր Բեռարը, այլև «բոլոր ժողովրդապետությանց ճակատագիրը»:

Հիրավի՛: Պլանավորելով 1918 թվականի ռազմական գործողությունները, ֆելդմարշալ Պաուլ ֆոն Հինդենբուրգը նախատեսում էր, որ Գերմանիայի դաշնակիցները պետք է սոսկ «դիմանային» մինչ իրենք կհաղթեին ֆրանսիական (արևմտյան) ճակատում: Թուրքական ուժերն այս պարագայում ազատված լինելով ռուսական հեղափոխության հետևանքով Փոքր Ասիայում (Հայաստան), կարող էին, ունենալով բավարար ուժ, «օժանդակել իրենց բանակներին Միջագետքում և Ասիայում» (Воспоминания Гинденбурга. Сокр. пер. с нем. Пг. 1922, էջ 65): Մանավանդ, որ համաձայն

գերմանական գլխավոր շտաբի, Թուրքիայի գլխավոր խնդիրը Կենտրոնական տերությունների համազորում ընկած էր «ավելի շատ Սիրիայի և Միջագետքի ուղղության մեջ, քան Կովկասում և Կասպից ծովի ուղղության մեջ» (նույն տեղը): Ընդհանուր առմամբ, մինչև ռուսական հեղափոխություն, այս տեսակետը թուրքական ղեկավարության միջավայրում արտաքուստ առարկությունների չէր հանդիպում: Այսպես, 1916 թվականի սկզբներին, Պլեսսում, էնվերը Հինդենբուրգին սիրո խոստովանություն էր անում: «Թուրքիայի դրությունը Ասիայում,- ասում էր նա,- որոշ չափով շատ դժվարին է: Մենք պետք է զգուշանանք, որ մեզ Հայաստանում ավելի հեռուն կշպրտեն: Չի բացառված նաև Իրաքում ռազմական գործողությունների վերսկսումը: Ես մտածում եմ նաև, որ շուտով անգլիացին ի վիճակի կլինի հարձակվել մեզ վրա Սիրիայում՝ գերազանցող ուժերով: Սակայն ինչ էլ պատահի Ասիայում, պատերազմի ելքը կախված է լինելու եվրոպական ճակատների իրավիճակից, դրա համար էլ ես առաջարկում եմ օգտվել իմ բոլոր ազատ դիվիզիաներից» (նույն տեղը, էջ 13):

Ասացինք «արտաքուստ», քանզի այլ էր թուրքական միլիտարիզմի բարոյական-քաղաքական ըմբռնումների հենքը: Ուստի և չքմեղանում է նույն Հինդենբուրգը, քծնելով իր գորշ հաճախորդին: «Ի՞նչ նշանակություն կարող են ունենալ Կ. Պոլսի խոստումներն ու բարի կամքը, երբ զորավարները ճակատամարտերի հեռավոր դաշտերում գնում են իրենց ճանապարհով» (նույն տեղը, էջ 104)՝ համաթուրանականության և համիսլամականության իդեալների ճանապարհով, Թուրքիայի համար «ամենադժվարագույն խնդիրներից մեկի» (Հինդենբուրգ)՝ հայկական հարցի «լուծման» ճանապարհով: «Ռուսաստանը հեղափոխությունից հետո,- արձանագրում է Հինդենբուրգը,- համիսլամությունը ձգտում էր տարածել Կովկասի ուղղությամբ: Նա ձգտում էր տարածվել նույնիսկ Անդրկովկասի ուղղությամբ և ի վերջո խճճվեց Կենտրոնական Ասիայի ընդարձակ տարածքներում» (նույն տեղը, էջ 31):

Եվ օսմանյան ճիվաղը, պատահական հանգամանքների երջանիկ դասավորությամբ ու Եվրոպայի ճիպոտի հզոր հարվածների տակ շրջադարձ էր կատարում դեպի Արևելք, դեպի նվիրական Թուրան՝ անսալով այս անգամ էլ դաշնակցային իր պարտավորություններին: Շուռ էր գալիս դեպի Արևելք, որտեղ Արևելյան Հայաստանն էր և արևելահայությունը, գաղթականության ահռելի զանգվածը, որդեգրում էր ռազմաքաղաքական մի ուղղություն [«Մենք հեռացանք Պալքաններեն, կը հեռանանք նաև Ափրիկեեն, բայց մենք պետք է տարածվենք դեպի Արևելք, հոն է մեր արյունը, մեր կրոնքը ու լեզուն: Եվ ասիկա՝ տարերային ձգողություն ունի»: «Մենք պետք է ճամբա ունենանք դեպի հոն: Եվ դուք՝ հայերդ կանգնած եք մեր այդ ճամբուն վրա... Դուք պետք է մեկ կողմ քաշվեք և մեզի ճամբա տաք: Ահա թե ուր է մեր հիմնական վեճը...»: Վեհիբը Բաթումում, Հայաստանի պատվիրակության անդամներին], որը, խորքի մեջ, ձևավորվել էր Բալկանյան պատերազմների արդյունքով ու ամրագրվել թուրք-գերմանական զինակցությամբ:

Թուրքիայում Գերմանիայի դեսպան տխրահռչակ բարոն Հանս ֆոն Վանգենհայմը (Wangenheim) օսմանյան Մեծ վեզիր Մեհմեդ Սայիդ Հալիմ փաշային ուղղված նամակում (1914 թ. օգոստոսի 6, կետ 5) ասում էր. «Գերմանիան պարտավորվում է Թուրքիային ապահովել նրա արևելյան սահմանների այնպիսի ուղղում, որը նրան հնարավորություն կտա հաստատել անմիջական շփում Ռուսաստանի մուսուլմանական տարրերի հետ» (Տե՛ս Лудшувейт Е. Ф., Турция в годы первой мировой войны 1914-1918 гг. Военно-политический очерк. М., 1966, էջ 33): Օսմանյան շովինիզմի ու ռասիզմի այս idea-fix-ը ըստ էության ամբողջական իր հիմնավորումն էր գտնում, անսպասելի չէ, պրուսական միլիտարիզմի աշխարհակալական-ցնորատեսական ձգտումներում:

Ռայխը, հաղորդում է կայզերական Գերմանիայի հայտնի գեներալներից Լիման ֆոն Զանդերսը, ենթադրում էր, որ Թուրքիան «ոչ միայն իր ձեռքում կպահի նեղուցներն ու կպաշտպանի սահմանները... այլև կիպատակեցնի Եգիպտոսը, կազատագրի Պարսկաստանը, հող կնախապատրաստի Անդրկովկասի անկախ պետությունների ստեղծման համար, Աֆղանստանի կողմից վտանգ կստեղծի Հնդկաստանին... և գործուն աջակցություն ցույց կտա Եվրոպայում ռազմական գործո-



Զինավարժություն, Բաքու, 1918 թ.

ղություններին» (Տե՛ս Готлиб В. В., Тайная дипломатия во время первой мировой войны. Пер. с англ. М., 1960, էջ 50):

...Ռազմավարական ազդակների այսպիսի խաչաձևման, աշխարհակալական իդեալների նման զուգորդման պայմաններում էլ թուրքական նենգամտությամբ խախտելով Երզնկայի (1917 թ. դեկտեմբերի 18) զինադադարը, ռուս-թուրքական կազմալուծված ռազմաճակատի ողջ երկայնքով, 1918 թվականի փետրվարի 12-ին, թուրքական բանակախումբը Մեհմեդ Վեհիբ փաշայի հրամանատարությամբ անցավ հարձակման: Պատմական հարկադրանքի ողջ օրհասականությամբ և անխուսափելի ճակատագրականությամբ սկսվեց Հայաստանի անկախության պատերազմը, առաջին աշխարհամարտի գոտեմարտերից ամենահերոսականն ու, թերևս, ամենաանհուսալին, սակայն ամենևին էլ ոչ աննշմարելին ու ցայսօր դեռևս ըստ արժանվույն չգնահատվածը, կռիվը հանուն Հայաստանի գոյության և, ինչպես կասեր նույն Վիկտոր Բեռարը, հանուն «բոլոր ժողովրդապետությանց» ապագայի: Պատմության տարիմաստություններից է. ճակատագիրը քրիստոնեական (կարդա՛ արևմտյան) քաղաքակրթության փրկության գործն Արևելքում բարդեց քրիստոնյա Հայաստանի արնածոր և արնաքամ ուսերին (1918 թ. արդեն ոչնչացված էր հայոց գենոֆոնդի շուրջ 50 տոկոսը: Օսմանյան պետությունը հայությունից (իր քաղաքացիներից) կողոպտել էր շուրջ 10 մլրդ. ֆրանկի հարստություն):

Հայաստանը զրկված էր այլընտրանքից. մնում էր պատերազմը՝ որպես ուղիղ ճանապարհ:

(1918 թ. սկզբներին նախկին Ռուսական ռազմաճակատը Արևմտյան Հայաստանում բաժանված էր երկու հատվածի. Բաբերդից (Բայբուրդ) մինչև Սև ծով ձգվում էր վրացական ազգային կորպուսը (12 հազար սվին և 80 հրետանային միավոր, հրամանատարը՝ գեներալ Վ. Դ. Գաբաև (Գաբաշվիլի), իսկ հայկական զինված ուժը՝ առանձին բանակային կորպուսը, պետք է պաշտպաներ Բաբերդից մինչև պարսկական սահմանն ընկած հատվածը, ներառյալ Էրզրում-Կարս ամրացված շրջանը (17 հազար սվին և 16 մարտկոց, հրա-



Բաքվում հայերը քաջաբար դիմադրում են թաթարներին

մանատարը՝ գեներալ-լեյտենանտ Թովմաս Նազարբեկյան): Ընդհանուր ռազմաճակատի գլխավոր հրամանատարն էր վրացի գեներալ-լեյտենանտ Ն. Զ. Օդիշելիձեն[1]):

Կռվողն, անշուշտ, հայկական բանակային կորպուսն էր և նրան օժանդակող այլ ուժեր: Այս աննախադեպ դյուցազնամարտի բոլոր ելևէջները, թե՛ ռազմական և թե՛ դիվանագիտական հողի վրա, մինչև Սարդարապատ ու Մայիս 28, մինչև Բաթումի դաշնագիր, հայտնի են և գնահատված. այն ավարտվեց Հայաստանի անկախության հռչակումով ու նրա միջազգային ճանաչումով:

Եվ մինչ կչորանար թանաքը Բաթումի դաշնագրի (1918 թ. հունիսի 4) տեքստի տակ, թալանից, ավարառությունից, թուրքական եղեռնագործությունից արբեցած, սակայն Արարատյան դաշտից դուրս շպրտված թուրանական հորդան խելակորույս մղումով նետվում է Բաքու: Առաջին նրա ընդհարումը Բաքվի զորքերի հետ տեղի ունեցավ 1918 թվականի հունիսի 5-ին, Քյուրդամիր կայարանի մոտ: Սկսվում է դյուցազնամարտի 2-րդ և վերջին արարը (Բաքվի էպոպեան), եթե կուզեք՝ վերջնամարտը: Այս պահից է դրսևորվում ապրելու հայոց անկոտրում կամքը, ռազմական հանճարի կենսատու ուժը, ռազմագիտական արվեստի (գնդապետ Զ. Ավետիսյան), հիրավի, շքեղ բեմականացումը:

Դատեք ինքներդ:

Բաքուն բազմաթիվ իմաստներով ուներ բացառիկ դեր առաջին աշխարհամարտի «շախմատային զինախաղի» Արևելյան հատվածում՝ Հայաստանի ճակատագրի, «աշխարհամարտի ելքի իմաստով» (Զ. Ձերարդ), շնորհիվ Բաքվի կազմակերպված ուժի, աշխարհագրական դիրքի և բացառիկ բնական հարստության՝ նրա քարյուղի:

Ճիշտ է, որ վառելանյութի, բացի քարածուխը, պաշարներից գրեթե զուրկ Գերմանիայի

---

[1] Ն. Զ. Օդիշելիձեն, գրում է խորհրդային հայտնի պատմաբան Ե. Ֆ. Լուդշուվեյտը, իր քաղաքական հայացքներով մոտիկ էր կանգնած վրացական «նացիոնալ-դեմոկրատներին», «որոնք, ըստ էության, գերմանական հետախուզական ծառայություն էին» (Տե՛ս Лудшувейт Е. Ф., Турция в годы первой мировой войны, էջ 161): Այս մութ անձնավորության քույրը Վեհիբ փաշայի կինն էր:

Հին Բաքուն, 1918 թ.

համար հրատապ խնդիրը Բաքվի նավթն էր՝ Գերմանիայի աղետը կանխելու միջոցը, սակայն կար նաև գլխավորը՝ համագերմանական (պանգերմանիզմի) իդեալը: Ընդ որում, համաշխարհային տիրապետության համար Գերմանիայի պայքարում 1917 թվականի մարտից հետո շեշտադրումները փոխվել էին, երբ անգլիացիները գրավեցին Բաղդադը: Այլևս անիրական դարձավ Բեռլին-Բաղդադ երկաթուղով Ասիայի խորքերը թափանցելու ռազմավարությունը: «Drank Nach Osten»-ը այսուհետև իր ճանապարհը, «Ասիայի խորքերը թափանցելու» իր ուղին կարող էր որոնել Բեռլին-Բաքու-Բուխարա համաշխարհային մայրուղում: Խոսքը տանք Զարևանդին (Զավեն Նալբանդյան), թուրք ինքնության և թուրքականության անգերազանց գիտակին: Թուրքերը, գրում է Զարևանդը, 1918 թվականին «կմտնեին հյուսիսային Պարսկաստան, կապստամբեցնեին Գիլանը և պարսկական Ատրպատականը անկախ հանրապետություն հռչակելու պատրաստություններ կտեսնեին»: Սակայն, ընդգծում է Զարևանդը, «թուրքերուն ու անոնց զինակից գերմաններուն աչքը Աշխաբադ-Միրվ [Մերվ]-Բուխարա-Սմրղանդ [Սամարղանդ]-Թաշքենտ [Տաշքենդ] ճամբուն վրա էր և չէին կրնար ճանապարհ վատնել նվաճելու հյուսիսային Պարսկաստանը» (Զարևանդ, Սելիմեն Քեմալ. Թրքական ծրագիրները Իրանի նկատմամբ.- «Հայրենիք», 1931, մայիս, էջ 160):

Եվ ուշագրավ էր, որ ռազմավարական հումքի և հատկապես նավթի պակասը, ռազմաքաղաքական ցայտնոտը էլ ավելի էին բորբոքում գերմանական ռազմամոլների անհագ նկրտումները: Գերագույն հրամանատարության գլխավոր ռազմակայանի խորհրդակցությունում Լյուդենդորֆը բացում է գլխավոր հրամանատարության խաղաքարտերը. գրավել նոր տարածքներ Թուրքմենիայում և Թուրքեստանում, հիմք դնել նավթի արդյունահանմանը Բաքվում (Прусско-германский генеральный штаб 1640-1965. К политической роли в истории. Пер. с нем. М., 1966, էջ 191): Գործը հասնում է ընդհուպ զավեշտի. այլևս անզոր (ցանկության դեպքում) զսպելու թուրքերի հայաջինջ քաղաքականությունը և ազդելու նրանց գործելաձևի վրա, առավել ևս գրավելու

Է. Լյուդենդորֆ

Բաքուն, թուրքական «Արևելք» զորախմբի շտաբի պետ, թուրքական ծառայության գերմանացի փոխգնդապետ Էռնստ Պարակվինը (Paraguin) Բաքվի Հայոց ազգային խորհուրդ է փոխանցում գերմանական «պահանջագիր-աղերսագիրը»՝ համեմված անիմաստ երաշխավորագրով. «Մենք ձեզանից,- ասվում է այնտեղ,- միայն այս ենք պահանջում.

1. Բաքուն առանց քանդելու և ավերելու մեզ հանձնել և մեզ թույլ տալ, որ նրա նավթից օգտվենք, 2. Հաշտություն և բարեկամություն» (Մելիք-Յոլչյան Ս., Բաքվի հերոսամարտը, «Հայրենիք», 1925, օգոստոս, էջ 106):

Այն, որ Գերմանիան համառորեն փրկության խարիսխ էր որոնում հուսահատորեն, վկայում են այլ աղբյուրներ ևս: Ֆրանսիացի հեղինակ, գեներալ Ռենե Տուռնեսը գրում է, որ մինչ այդ գեներալ Լյուդենդորֆը դիմում է Ենվեր փաշային՝ կովկասյան բանակների վերախմբավորման և Թիֆլիս-Երևան երկաթուղով Թավրիզի շրջան տեղափոխման պահանջով՝ հանուն Միջագետքի 6-րդ բանակի ուժեղացման: Դրանով, ըստ մտահղացման, կամրացվեր Մոսուլը և Բաքվի նավթային շրջանը, որը գերմանացիները ցանկանում էին օգտագործել իրենց համար՝ դեպի Բաթում և Փոթի նավահանգիստներ ձգվող երկաթուղու միջոցով (Турнэс Р., Фош и победа союзников 1918 года. Пер. с фр. М., 1938, էջ 179):

Այսպիսով, համաշխարհային Սոդոմ-Գոմորում հայտնված յուրաքանչյուր աշխարհակալ ուժ առաջին հերթին հետապնդում էր իր հատուկ քաղաքական-ռազմավարական նպատակները, քաղաքագիտության այսօրվա հասկացողությամբ՝ իր գերակա ազգային շահերը: Այսպես, Գերմանիային շարժում էր աշխարհակալությունը, բրիտանական թագի տեղը զբաղեցնելու տենչը աշխարհում, ռուսական (Կովկաս-Անդրկովկաս, Միջին Ասիա) որոշայնին և անգլիական Արևելքին (Աֆղանստան, Հնդկաստան) տիրանալու անկասելի ձգտումը և, իհարկե, նրան շարժող կենսատու արյունը՝ նավթը: Ճիշտ է, 1918 թվականին Կենտրոնական տերությունների տրամադրության տակ էր ռումինական հումքը, սակայն «Գերմանիայի կողմից ռումինական նավթային արդյունաբերության և հացահատիկի ժամանակավոր գրավումը նրան ապահովեց,- Բեզիլ Լիդլ Հարտի պատկերավոր գնահատմամբ,- միայն դեֆիցիտի (պակասորդ) և կոլապսի (կործանում) միջև տարբերությունը (Տե՛ս Ергин Д., Добыча. Всемирная история борьбы за нефть, деньги и власть, էջ 199):

Ասվել է. Ռումինիան էր, որ «իր բռնազավթումից հետո դարձավ նավթի, ինչպես նաև հացահատիկի մեծ քանակի հիմնական մատակարարը: 1916 թվականի նոյեմբերից մինչև 1918 թվականի նոյեմբեր Ռումինիան տվեց 1,141 մլն. տոննա նավթ, որից 890 հազարը ստացավ Գերմանիան, Ավստրո-Հունգարիան՝ 231200 հազար տոննան, իսկ մնացած քանակությունը Թուրքիան և Բուլղարիան» (Տե՛ս Прусско-германский генеральный штаб 1640-1965. К политической роли в истории, էջ 173): Ակնհայտ է նաև, որ նույն Լյուդենդորֆը պատերազմի ընթացքը փոխելու միջոցը տեսնում էր Բաքվի նավթահանքերին տիրանալու մեջ և այդ խելահեղ նպատակին հասնելու ճանապարհին Գերմանիան երկնեց Բրեստ-Լիտովսկի դաշնագիր-կոմպրոմիսը (փոխզիջում) գերմանական իմպերիալիզմի և ռուսական «սոցիալ իմպերիալիզմի» միջև: Սակայն, մինչ այդ, դաշնագրով դադարեցվում էին ռազմական գործողությունները երկու «ոխերիմ բարեկամների» Գերմանիայի և Ռուսաստանի միջև, թուրքերն արդեն սլանում էին դեպի Բաքու, դեպի Արևելք՝ Հինդենբուրգի հոգեզավակ Ենվերի նախաձեռնու-

թյամբ: «Նախազգալով,- գրում է «նավթի մասնագետ» Դ. Երգինը,- որ դաշնակցի հաջողությունը կհանգեցնի նավթահանքերի անխնա ոչնչացման, Գերմանիան բոլշևիկներին խոստացավ զսպել թուրքերին՝ փոխան նավթի: «Իհարկե, մենք համաձայն ենք»,- ասաց Լենինը: Իոսիֆ Ստալինը համապատասխան հրամանով հեռագիր ուղարկեց քաղաքը վերահսկող Բաքվի Կոմունային: Սակայն տեղական կոմունիստները չցանկացան համաձայնել: «Ո՛չ հաղթանակի, ո՛չ պարտության դեպքում մենք գերմանական թալանչիներին չենք տա մի կաթիլ նավթ՝ արդյունահանված մեր աշխատանքով՝ պատասխանեցին նրանք» (Ергин Д., Добыча. Всемирная история борьбы за нефть, деньги и власть, էջ 200):

Ի մասնավորի, Բաքվի (տեղական) բոլշևիկների այս առողջ ու հայրենանվեր դիրքորոշումը բարձր է գնահատում Բաքվի հայոց ազգային խորհրդի նախագահ Աբրահամ Գյուլխանդանյանը: Նրանք, գրում է վերջինս, «որոնք որոշ ուժ էին ներկայացնում Բաքվի առանձնահատուկ պայմանների մեջ», ոչ միայն դատապարտում էին իրենց ընկերներին Բրեստ-Լիտովսկի «ամոթալի գործի համար», այլև «բացարձակորեն հայտարարում էին, որ իրենք չեն ընդունում այդ դաշնագիրը և որոշում ունեին ամեն կերպ դիմադրելու տաճիկների ներխուժումին...» (Գյուլխանդանյան Ա., Բագուն Հայաստանի անկախության և նորա պահպանման տեսակետից, էջ 24):

Լյուդենդորֆը վճռական էր. 1918 թվականի մայիսի 15-ին Կ. Պոլսում գտնվող գեներալ Հանս ֆոն Սեկտին (թուրքական բանակի գլխավոր շտաբի պետի գերմանացի տեղակալ) նա հրամայում է ձեռք առնել այնպիսի միջոցներ, որոնք էնվեր փաշային կպարտավորեցնեին ձեռնպահ մնալ Բրեստի պայմանագրով նախատեսված տարածքային ձեռքբերումների ընդարձակումից (Muhlmann C., Das Deutsh-Turkische Waffenbundnis im Welkrige, Lepzig, 1940, էջ 198): Հետագայում, էնվերին ուղարկված հեռագրով Լյուդենդորֆը սպառնում էր, որ եթե Թուրքիան չհարգի Բրեստում հաստատված սահմանները, «Գերմանիան իրեն թողնում է ազատ ընդունելու հետագա որոշումները» (նույն տեղը, էջ 199):

Այստեղ, ուրեմն, արձանագրենք, որ Գերմանիան չկարողացավ ա) Թուրքիային պահել Բրեստ-Լիտովսկի պայմանագրի շրջանակներում, բ) նրան ամբողջությամբ ուղղորդել հարավ՝ անգլիացիների դեմ:

Նավթահոտ խարդավանքների և իշխանատենչության համաշխարհային մրցապայքարի սարդոստայնում էլ ակնհայտնի պսակազերծվում է խորհրդահայ պատմագրության մառախլապատ «գլուխկոտրուկը»՝ Բաքվի կոմունայի, նրա պրոլետարիատի, այնտեղ ապրող հայ, ռուս և այլնի ճակատագրի հանդեպ Վոլոդյա Ուլյանով-Լենինի, Իոսիֆ Ջուղաշվիլի-Ստալինի և նրանց «երկաթյա» կամակատար խամաճիկների, «կապուտաչյա» Ստ. Շահումյանի «հեղափոխական» դիրքորոշումը (հանգամանորեն տե՛ս Խոմիզուրի Գ., Հավասարում 26 հայտնիներով.- «Նորք», 1996, թիվ 1-3, Хомизури Г. П., Социальные потрясения в судьбах народов. На примере Армении, М., 1997, էջ 83-115 («1917-1922 годы. Кавказ, Турция»), որն ի վերջո հանգեցրեց Բաքվի աղետին, առաջին հերթին հայ «աշխատավորության» թուրանական սպանդին:

Թերևս, գերմանացիներն, իրոք, Բաթումում ցանկանում էին զսպել թուրքերին, սակայն նրանք այդ ուժը, ինչպես ասվել է, այլևս չունեին: Ուստի և զավեշտից ու քաղաքական դեմագոգիայից այն կողմ չի անցնում Լենինի հեռագիրը Ցարիցին՝ Ստալինին, համեմված բացահայտ ցինիզմով. «Բաքվի վերաբերմամբ ամենակարևորն է, որ դուք անդադար կապի մեջ լինեք Շահումյանի հետ, որպեսզի Շահումյանը գիտենա գերմանացիների առաջարկը, որ ասվել է դեսպան Իոֆֆեին Բեռլինում, այն մասին, թե գերմանացիները կհամաձայնեն կանգնեցնել թուրքերի հարձակումը Բաքվի վրա, եթե մենք երաշխավորենք գերմանացիներին տալ նավթի մի մասը: Մենք, իհարկե, կհամաձայնվենք» (1918 թ. հուլիսի 7.- Լենին Վ. Ի., ԵԼԺ, հ. 50, Եր., 1983, էջ 132): Ավելին. «Խորհուրդների V համագումարի և կենտրոնական խորհրդային իշխանության որոշման դեմ դաշնակների (կարդա՝ հայ ազգային ուժերի.- Լ. Շ.) ամեն մի գործողություն դիտվել է որպես ապստամբություն և որպես դավաճանություն: Զորքեր ուղարկելու համար միջոցներ ձեռք կառնենք, բայց հաստատապես խոսք տալ չենք կարող» (Լենինը՝ Շահումյանին, 1918 թ. հուլիսի 29.- նույն տեղը, էջ 148-149):

(Շարունակությունը հաջորդ համարում)

ՊԱՇՏՊԱՆԵՆՔ ՄԵՐ ԶԻՆԱՆՇԱՆԸ ՕՐԵՆՔԻ ՈՒԺՈՎ

Հայաստանի պետական զինանշանի օրենսդրական պաշտպանվածության որոշ հարցերի մասին

Արծվիկ Մինասյան

ԽՍՀՄ փլուզումից հետո Հայաստանի նորանկախ հանրապետության առաջնահերթություններից մեկը դարձավ պետական նոր խորհրդանիշներից՝ զինանշանի հաստատումը:

Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդը 1992 թվականի մարտի 25-ի Հ.Ն-0580-I թվակիր օրենքով սահմանեց, որ Հայաստանի Հանրապետության պետական զինանշանը Հայաստանի առաջին հանրապետության կառավարության կողմից դեռեւս 1920 թվականին հաստատված զինանշանն է:

1995 թվականի հուլիսի 13-ից ուժի մեջ մտած Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 13-րդ հոդվածով սահմանվեց, որ զինանշանի կենտրոնում վահանի վրա պատկերված են Արարատ լեռը՝ Նոյյան տապանով եւ պատմական Հայաստանի չորս թագավորությունների զինանշանները: Վահանը պահում են արծիվը եւ առյուծը, իսկ վահանից ներքեւ պատկերված են սուր, ճյուղ, հասկերի խուրձ, շղթա եւ ժապավեն: Չնայած նախընթաց ժամանակահատվածում բազմաթիվ տեսակետների ներկայացմանը (նեռայալ զինանշանը փոփոխելու կամ դրանում որոշակի ճշգրտումներ կատարելու առաջարկները), այնուամենայնիվ 2005 թվականի սահմանադրական փոփոխությունները, պետական զինանշանին անդրադարձ կատարելով, պահպանեցին տրված ընդհանուր նկարագիրը, միաժամանակ ամրագրելով, որ զինանշանի մանրամասն նկարագրությունը տրվում է օրենքով:

Անդրադառնալով զինանշանի՝ օրենքով մանրամասն նկարագրելու հարցին, ՀՀ Ազգային ժողովի կողմից 2006 թվականի

հունիսի 15-ին ընդունված ՀՕ-148-Ն թվակիր օրենքը (բաղկացած 11 հոդվածներից) նախ սահմանեց, որ Հայաստանի Հանրապետության զինանշանը Հայաստանի Հանրապետության պետական խորհրդանիշներից է: Մանրամասն նկարագրելով այն, օրենքի 2-րդ հոդվածը ամրագրեց, որ զինանշանի կենտրոնում՝ վահանի վրա պատկերված Արարատ լեռան եւ Նոյյան տապանի հետ միասին պատկերվում են պատմական Հայաստանի թագավորություններից չորսի՝ վերեւից ձախ՝ Բագրատունիների, վերեւից աջ՝ Արծակունիների, ներքեւից ձախ՝ Արտաշիսյանների, ներքեւից աջ՝ Ռուբինյանների զինանշանները: Վահանը պահում են ձախից՝ արծիվը, աջից՝ առյուծը, իսկ վահանից ներքեւ, ինչպես նախատեսված է Սահմանադրության մեջ, պատկերված են սուր, ճյուղ, հասկերի խուրձ, շղթա եւ ժապավեն:

Օրենքով ամրագրվեց նաեւ, որ զինանշանի գույները խորհրդանշում են Հայաստանի Հանրապետության դրոշի գույները, որի համաձայն Հայաստանի Հանրապետության զինանշանի հիմնական գույնն է ոսկեգույնը, պատմական Հայաստանի թագավորությունների զինանշանները՝ Բագրատունիներինը եւ Ռուբինյաններինը՝ կարմիր, իսկ Արծակունիներինը եւ Արտաշիսյաններինը՝ կապույտ: Արարատ լեռան գույնը սահմանվում է նարնջագույնը: Օրենքի հավելվածով տրվեց զինանշանի գունավոր պատկերը:

Օրենքը սահմանեց նաեւ զինանշանի գործածման կանոնները: Այսպես, նախ սահմանվում է, որ Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմինների զինանշանները, կազմակերպությունների խորհրդանիշները, ինչպես նաեւ այլ խորհրդանիշներն ու զինանշանները պետք է տարբերվեն Հայաստանի Հանրապետության զինանշանից: Հայաստանի զինանշանի գունավոր պատկերը ենթակա է գործածման Հայաստանի Հանրապետության օրենքների, Նախագահի հրամանագրերի եւ կարգադրությունների, Ազգային ժողովի, Կառավարության, վարչապետի, Սահմանադրական դատարանի որոշումների, դատարանների որոշումների, վճիռների եւ դատավճիռների, պաշտոնական տեղեկագրերի վրա, ինչպես նաեւ պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմինների ձեւաթղթերի վրա: Ինչ վերաբերում է զինանշանի միագույն օգտագործման դեպքերին, ապա օրենքը սահմանում է, որ զինանշանի միագույն պատկերը գործածվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիների անձնագրերի կամ անձը հաստատող այլ փաստաթղթերի, պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման այն մարմինների կնիքների եւ ձեւաթղթերի վրա, որոնց՝ Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերը գործածելու իրավունքը վերապահված է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

Բացի դա, օրենքը սահմանեց, որ զինանշանի պատկերը մշտապես տեղադրվում է Հայաստանի Հանրապետության Նախագահի, Ազգային ժողովի նախագահի, վարչապետի, Սահմանադրական դատարանի նախագահի, մարդու իրավունքների պաշտպանի, դատավորների, ինչպես նաեւ մի շարք այլ պաշտոնատար անձանց աշխատասենյակներում, հանրապետության հիմնական սահմանային նշանների վրա, պետական սահմանի անցագրային կետերում եւ այլն: Զինանշանը կարող է պատկերվել Հայաստանի Հանրապետության դրամական միավորների, շքանշանների ու մեդալների վրա: Ի հավելումն օրենքով նախատեսված կանոնների, ՀՀ կառավարությունը լրացուցիչ սահմանեց եւս յոթ հիմնական դեպքեր, որոնց պայմաններում կարող է օգտագործվել զինանշանը, մասնավորապես՝ այդպիսի դեպքեր են օրենքով սահմանված տոներին կազմակերպվող հանդիսությունները եւ հիշատակի օրերին անցկացվող հանրահավաքները, երթերն ու այլ միջոցառումները, պետական եւ պաշտոնական միջոցառումների ժամանակ՝ կրծքանշաններ, հուշանվերներ, վերնաշապիկներ, մարզական համազգեստներ պատրաստելիս, ՀՀ օրհներգի կատարման ժամանակ եւ այլն:

Օրենքը սահմանեց նաեւ, որ Հայաստանի տարածքում Հայաստանի Հանրապետության զինանշանը օտարերկրյա պետության զինանշանի հետ միաժամանակ տեղադրելու դեպքում այլ պետությունների պետական զինանշանների չափերը չեն կարող գերազանցել Հայաստանի Հան-

Ն.Տ.Դ. ԲԻՐՈՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ
A.R.F. BURO LIBRARY

ռաղեսության զինանշանի չափերը: Իսկ Հայաստանի զինանշանը օտարերկրյա պետության զինանշանի հետ միաժամանակ տեղադրելու դեպքում Հայաստանի Հանրապետության զինանշանը չի կարող տեղադրվել ավելի ցածր, քան օտարերկրյա պետության զինանշանը:

Հայաստանի Հանրապետության զինանշանը օտարերկրյա պետության զինանշանի հետ միաժամանակ տեղադրվելու անհրաժեշտության դեպքում Հայաստանի Հանրապետության զինանշանը պետք է տեղադրվի տվյալ շենքի ձախ կողմից (դեմքով դեպի այդ շենքը): Ընդ որում, եթե միաժամանակ տեղադրվում է կենս թվով մի քանի զինանշան, ապա Հայաստանի Հանրապետության զինանշանը պետք է տեղադրվի դրանց մեջտեղում: Եթե տեղադրվում են զույգ թվով (2-ից ավելի) զինանշաններ, ապա Հայաստանի Հանրապետության զինանշանը պետք է տեղադրվի կենտրոնից ձախ:

Չնայած պետական զինանշանի օրենսդրական նման մանրակրկիտ կարգավորմանը, այնուամենայնիվ իրական կյանքում ակնհայտ դարձավ, որ մեր պետական զինանշանի պաշտպանվածությունը բավարար չէ: Ամենաակնառու դեպքը 2008 թ. Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի տարբերանշանի վրա առկա զինանշանի աղավաղումն էր, երբ Հայաստան-Թուրքիա ֆուտբոլային հանդիպումից առաջ փոփոխվել էր հանրապետության զինանշանը: Թեեւ այս միջադեպը բազմաթիվ քննարկումների, օրենսդիր մարմնում տարբեր հայտարարությունների, ներառյալ դատական վարույթ հարուցելու տեղիք տվեց, իսկ հետագայում էլ՝ ֆեդերացիայի ղեկավարությունը ներողու- թյուն հայցելով փորձեց հերքել այդ փոփոխության կանխամտածվածությունը, այնուամենայնիվ այս միջադեպը առիթ տվեց օրենսդրական մակարդակով քննության առնել եւ փոփոխության ենթարկել պետական զինանշանի պաշտպանվածության համակարգը:

Որպես հարցի կոնկրետ լուծում՝ Հայ Յեղափոխական Դաշնակցության պատգամավորական խմբակցությունը մշակեց եւ շրջանառության մեջ դրեց օրենսդրական նախագիծ: Այս օրինագիծը 2009 թ. ապրիլի 7-ին ընդունվեց ՀՀ ԱԺ-ի կողմից: Օրենքի հիմնական խնդիրն է նախ սահմանել պետական զինանշանի փոփոխության արգելքները, ինչպես նաեւ նախատեսել պատասխանատվություն այն խախտելու համար:

Ըստ այդմ, սահմանվեց, որ արգելվում է զինանշանի, օրենքով սահմանված պատկերի, դրա կառուցվածքի կամ գույների փոփոխումը, ինչպես նաեւ զինանշանի պատկերի կամ դրա բաղադրիչների պատճենահանած գործածումը այլ զինանշաններում, տարբերանիշներում կամ խորհրդանիշներում: Բացի այդ, սահմանվում է, որ որեւէ խորհրդանիշ չի կարող շփոթության աստիճան նման լինել Հայաստանի Հանրապետության զինանշանին: Ըստ էության այս նախաձեռնությամբ կանխվում է զինանշանի հնարավոր ձեւախեղումն ու անարգումը, քանի որ գործող օրենքով սահմանված չէր զինանշանի կառուցվածքային, պատկերային կամ գունային փոփոխման ուղղակի արգելք:

Ինչ վերաբերում է արգելքի համար նախատեսվող պատասխանատվության միջոցի կիրառմանը, ապա օրենքը նախատեսեց, որ այս արգելքների խախտումը հավասարազոր է Հայաստանի քրեական օրենսգրքի 331-րդ հոդվածով նախատեսված եւ պատժվող պետական խորհրդանիշի անարգում հանցագործությանը: Ուստի, եթե որեւէ անձ, սկսած 2009 թվականի ապրիլի 30-ից, ձեռնարկի ՀՀ պետական զինանշանի նկատմամբ օրենքով արգելված գործողություն կամ նսեմացնի, կենթարկվի քրեական պատասխանատվության՝ ընդհուպ մինչեւ մեկ տարի ազատազրկման տեսքով:

Թեեւ գործնականում օրենքի դրույթների գործադրումը հաճախ հանդիպում է դժվարությունների եւ ձեւավորվում է տարբեր ձեւերով շրջանցելու ցանկություն, հուսով ենք, որ ընդունված լուծումը կսահմանափակի հնարավոր իրավախախտումների բազմաթիվ դեպքերը՝ ստեղծելով կանխարգելիչ եւ պատժիչ արդյունավետ համակարգ:

Հուսանք, որ նման պատիժների ականատեսը չենք դառնա հաճախ, եւ յուրաքանչյուր ոք կդրսեւորի հարգանք եւ պատասխանատվություն Հայաստանի պետական խորհրդանիշների հանդեպ:

ՀՅԴ մասնակցությունը 1910 թ. Կոպենհագենի միջազգային սոցիալիստական կոնգրեսին

Հակոբյան Կ. Հ.

ՀՅԴաշնակցության մուտքը սոցիալիստական մեծ ընտանիք՝ Սոցինտերն (Երկրորդ ինտերնացիոնալ), կարևոր քայլ էր կուսակցության համար, հավելյալ մի ամբիոն, միջազգային հանրության, մասնավորապես՝ սոցիալիստական աշխարհի, ուշադրությունը մշտարթուն պահելու Հայկական հարցի և հայությանը հուզող այլ խնդիրների վրա:

Եվ երբ ՀՅԴ-ն (1907 թ. օգոստոսին) Շտուտգարդի միջազգային սոցիալիստական կոնգրեսում դարձավ Սոցինտերնի լիիրավ անդամ, կուսակցությանը իրավունք տրվեց իր մշտական ներկայացուցիչն ունենալ Միջազգային սոցիալիստական բյուրոյում (այսուհետև՝ Միջ. սոց. բյուրո - Կ. Հ.) հանձինս ՀՅԴ նշանավոր տեսաբան և միջազգային սոցիալիստական շարժման գործիչ Միքայել Վարանդյանի (Հովհաննիսյան):

Սակայն, 1907-ին Սոցինտերնին անդամագրվել էր միայն ՀՅԴ Ռուսաստանյան կայսրության տարածքում գործող հատվածը, ստանալով ընդամենը 1 վճռական և 2 խորհրդակցական ձայնի իրավունք: Ուստի, սկսած Շտուտգարդի կոնգրեսից, ՀՅԴ կողմից Միջ.սոց.բյուրոյի առջև բարձրացվել էր նաև ՀՅԴ Օսմանյան կայսրությունում գործող հատվածին ձայնի իրավունք տալու խնդիրը: Այդ հարցը իր լուծումը գտավ արդեն 1908 թ. հոկտեմբերին՝ Միջ.սոց.բյուրոյի 10-րդ համագումարում: Հատկանշական է, որ Օսմանյան կայսրությունում գործող ՀՅԴ հատվածին նույնպես Սոցինտերնի մեջ ընդգրկելու՝ Մ. Վարանդյանի առաջարկը ընդունվեց միաձայն:

Հաշվի առնելով Իրանում ծավալվող հեղափոխական իրադարձությունները և դրանցում ՀՅԴ կարևոր դերը, ՀՅԴ Արևմտյան բյուրոն ծրագրում էր վճռական ձայնի իրավունք ստանալ նաև ՀՅԴ Իրանի հատվածի համար: «Հարկաւոր է մի զեկուցում Պարսկաստանի մասին և պահանջել մի ձայն այնտեղի համար...»,- գրում էր ՀՅԴ առաջնորդ Ռոստոմը «Դրոշակի» խմբագրությանը՝ Կոպենհագենի կոնգրեսից մի քանի ամիս առաջ: Սակայն, ՀՅԴ Իրանի հատվածին ևս ձայնի իրավունք տալու հարցը իր դրական լուծումը չստացավ:

Դրա պատճառների մասին մենք տեղեկանում ենք ՀՅԴ գործիչներից՝ Հայրիկի (Հ. Պանիրյան) Մ. Վարանդյանին ուղղված 1912 թ. փետրվարի 27-ի նամակից. «Ցաւում ենք, որ վերջին անցքերի պատճառով, ժամանակին կարելի չեղաւ ուղարկել թէ՛ պարսկական շարժումների պատմությունը և թէ՛ տեղեկագրերը՝ մեր շրջանի սոց.գործունէութեան, որ Պարսկաստանի ճիւղն էլ ինտերնացիոնալում ընդունել և ճանաչել տալու համար»:

Նամակի բովանդակությունից պարզ է դառնում, որ ՀՅԴ-ին բնորոշ՝ «կենդանի գործով» տարվելու իրողությունն էր պատճառ դարձել, որ ՀՅԴ Իրանի հատվածը չէր հասցրել կազմել անհրաժեշտ փաստաթղթեր՝ Սոցինտերնին անդամագրվելու և ձայնի իրավունք ստանալու համար: Այդուհանդերձ, ի տարբերություն 1907-ին կայացած Շտուտգարդի համաժողովի, 1910-ին Կոպենհագենում ՀՅԴ-ն արդեն ուներ 4 վճռական ձայն, որոնցից 2-ը կուսակցության ռուսաստանյան հատվածին էր տրված, 2-ը՝ թուրքականին:

Մինչ Կոպենհագենի կոնգրեսի սկսվելը, Արևմտյան բյուրոյի առջև դրված էր համաժողովին ներկայացվելիք ՀՅԴ տեղեկագիրը կազմելու առաջադրանքը: Նրանում հարկավոր էր հավուր պատշաճի ներկայացնել կոնգրեսների միջև ընկած ժամանակահատվածում ՀՅԴ իրականացրած գործունեությունը: Դա էր պատճառը, որ Ռոստոմը «Դրոշակի» խմբագրությանը ուղղված մի նամակում ակնհայտորեն սրտնեղում էր. «Անչափ բարկացել ենք ձեզ վրայ, որ այդքան ուշ էք իմաց տուել Կոպէնհակէն ուղարկելիք զեկուցման մասին: 1907-1910 թուականները ամենակարևոր շրջանն է մեր յեղափոխական կեանքում: Դա եզրափակումն է մեր 20-ամեայ գործունէութեան: Անհրաժեշտ էր շատ լաւ մշակուած մի զեկուցում, ուր յստակ պարզուած լինէին Դաշնակցութեան առանձնայատուկ կողմերը, նրա կատարած դերի կարևորութիւնը «Մօտավոր Արևելքում»...: Ռազմական մեր տակտիկի վրայ չպիտի քաշուենք առանձնապէս շեշտելու»:

Պատահական չէ նաև, որ Ռոստոմը բացատրում էր, թե տեղեկագրում ինչի վրա պետք է շեշտը դնել, և պատրաստակամություն էր հայտնում համապատասխան նյութերով օգնել այդ փաստաթուղթը կազմողներին: Օրինակ՝ Տարոնի շրջանի գործունեության մասին նա խորհուրդ էր տալիս նյութեր վերցնել Ռուբենից (Մ. Տեր-Մինասյան), իսկ կովկասյան գործունեության վերաբերյալ՝ պատրաստակամություն էր հայտնում ուղարկել 1909 թ. Վառնայի ընդհանուր ժողովին ներկայացված տեղեկագրերի պատճենները:

Միջ.սոց.բյուրոյի կողմից Կոպենհագենում ՀՅԴ-ից ակնկալվող տեղեկագրի կոնկրետ չափորոշիչների վերաբերյալ Միջ.սոց.բյուրոյի քարտուղար Ք. Հյուիսմանսը ժամանակին պարզաբանումներ էր արել «Դրոշակի» խմբագրությանը ուղղված իր նամակներում, որոնք պահպանվել են ՀՅԴ արխիվում: «Ձեր տեղեկագիրը պէտք չէ ծաւալուն ըլլայ: Չորս համառօտ ու յստակ էջեր բաւարար են: Ժընև շատ դիւրաւ կրնաք գերմաներէն և անգլերէն թարգմանիչներ գտնել»,- գրում էր Ք. Հյուիսմանսը 1910 թ. հունիսի 8-ին: Սակայն, ՀՅԴ տեղեկագիրը մասամբ միայն բավարարեց Ք. Հյուիսմանսի պահանջները: Այն ներկայացվեց պահանջված երեք լեզուներով (անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն - Կ. Հ.), սակայն գերազանցեց թույլատրված ծավալը՝ հասնելով մոտ 30 տպագիր էջի:

Կարևորելով ՀՅԴ երեք հատվածների՝ Իրան, Թուրքիա, Ռուսաստան, գործունեությունը, տեղեկագրի մեջ, այնուամենայնիվ, շեշտը դրվում էր Թուրքիայում կուսակցության իրականացրած քաղաքականության վրա՝ դրա արդյունքը համարելով սուլթան Աբդուլ Համիդի իշխանության տապալումը և նոր վարչակարգի ձևավորումը:

Սակայն, մինչ Թուրքիային վերաբերող հարցերին անցնելը, տեղեկագրում առանձին բաժնով անդրադարձ էր կատարվում նաև Իրանի և Կովկասի իրադարձություններում ՀՅԴ դերակատարությանը: Իրանի սահմանադրական շարժման մեջ ՀՅԴ-ն ներկայանում էր որպես առաջամարտիկ՝ հանձինս Եփրեմ խանի:

Անդրադառնալով կուսակցության կովկասյան գործունեությանը, տեղեկագիրը մերկացնում էր հարևան ազգերին իրար դեմ գրգռելու ցարիզմի քաղաքականությունը՝ նկատի ունե-

նալով հայ-թաթարական ընդհարումները և ՀՅԴ դեմ նյութվող ու արդեն սկսված լիժինյան բռնությունների ալիքը: Կովկասից մինչև Լեհաստան ու Ֆինլանդիա տարածված ցարիզմի հետադիմական քաղաքականությանը դիմագրավելու համար ՀՅԴ տեղեկագիրը հրավիրում էր «ընկերվարական կուսակցութեանց համակարգեալ գործակցութեան»: Այս հարցը նախապես քննարկվել էր ՀՅԴ 5-րդ ընդհանուր ժողովում, որը եկել էր հետևյալ եզրահանգմանը. «1. որ պրոլետարական-գիւղացիական լայն զանգուածներու ընկերվարական գիտակցութիւնը, հրաշալի ու ահեղ ուժ մը ըլլալով հանդերձ, չի բաւեր քանդելու բռնապետութեան ամուր համակարգը, 2. որ այդ գիտակցութիւնը իրեն դաշնակից պարտի ունենալ *յեղափոխական* կամ զինական *պատրաստութիւն*՝ սուիններու գրոհին դիմագրաւելու համար»[1]:

Ցարական բռնատիրական վարչակարգից ազատվելու հիմնական միջոց համարելով հեղափոխական շարժման ակտիվացումը և շեշտը դնելով զինյալ պայքարի վրա՝ ՀՅԴ-ն փորձում էր հասկացնել Ռուսաստանյան կայսրության սոցիալ-դեմոկրատական կուսակցություններին, որ մասնակի կամ ընդհանուր գործադուլներով հնարավոր չէ հաջողություններ գրանցել: ՀՅԴ տեղեկագիրը նման մարտավարությունը հիմնավորում էր երկու հետադիմական վարչակարգերի (սուլթանական Թուրքիա և շահական Իրան - Կ. Հ.) ձախողման փաստով և այդ գործում ՀՅԴ մասնակցության փորձով:

Ինչպես երևում է տեղեկագրի բովանդակությունից, նրա հեղինակները հետևել էին կուսակցության առաջնորդ Ռոստոմի հորդորներին և շեշտադրումները տեղափոխել էին ՀՅԴ ռազմաքաղաքական գործունեության վրա: Մոտենալով 1908 թ. հուլիսյան պետական հեղաշրջմանը՝ տեղեկագրի շարադրանքը կենտրոնանում էր Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած ժողովրդական ընդվզումներին (Էրզրում, Դիարբեքիր, Բիթլիս), երիտթուրքերի հետ համագործակցության հարցերին. «Հայ և թուրք կազմակերպութիւնները,- նշվում է տեղեկագրում,- ճոխ ու այլազան գործունէութիւն մը զարգացուցին: Յօդուածներով ու թռուցիկներով՝ անոնք թուրք, քիւրտ ու հայ կը հրաւիրէին համաձայնութեան, միացեալ գործունէութեան՝ բռնատիրութեան դէմ: Կը տարածէին արտասահմանէն ստացուած թուրքերէն, հայերէն, արաբերէն ու քրտերէն գաղտնի գրականութիւն: Ընկերվարութեան միջազգայնական գաղափարներով թափանցուած՝ զօրակցաբար՝ անոնք խօսքով ու գործով կը պաշտպանէին աշխատաւոր ժողովուրդի շահերը...»[2]:

Ներկայացնելով 1908 թ. հուլիսյան իրադարձությունների ամբողջ ընթացքը՝ տեղեկագիրը մերկացնում էր «սահմանադրական» Թուրքիայի նոր ղեկավարների՝ երիտթուրքերի, սոցիալ-տնտեսական, հողային, ազգային քաղաքականությունը:

«Ընկերվարական քարոզչություն» խորագիրը կրող բաժնում ներկայացնելով այն պայմանները, որոնք խոչընդոտում են սոցիալիստական գաղափարների տարածմանը, տեղեկագիրը արձանագրում էր. «...այսօր լեգէոն մըն ենք մենք, որ այս անհուն անապատին մէջ կը պարզենք աշխատանքի ու համաշխարհային ընկերվարութեան դրօշը, անոր յենարան տալով մեր կենդանի խօսքը և մեր գործը»[3]:

ՀՅԴ այս կենդանի խոսքի ու գործի արդյունքները իրենց ուշացնել չտվին: Նրա ծրագրի ընկերվարական մոտեցումների քարոզչությունը սկսեց ընդգրկել հասարակական ավելի լայն շրջանակներ: Առաջ էր տարվում հողերի համայնացման գաղափարը, որը կամաց-կամաց նպաստավոր արձագանք էր գտնում Արևմտյան Հայաստանի բնակչության շրջանում: ՀՅԴ երեսփոխանները արհմիությունների վերաբերյալ քննարկման ժամանակ պաշտպանում էին արհմիությունները, քննարկումներ ծավալում՝ աշխատավորների շահերի պաշտպանության շուրջ:

Դատելով Կոպենհագենի կոնգրեսին ներկայացված տեղեկագրից, ՀՅԴ-ն կարևորում էր արհմիությունների և գյուղացիական միությունների դերը, և պատահական չէ, որ Թուրքիայի տարբեր քաղաքներում կազմակեր-

---

[1] Դրօշակ,1986, դեկտեմբեր 10, N 17, էջ 26:
[2] Դրօշակ,1986, դեկտեմբեր 24, N 18, էջ 24:
[3] Դրօշակ,1986, դեկտեմբեր 24, N 18, էջ 27:

Նիկոլ Դուման

պությունը, բացի քաղաքային կամ մարտական խմբերից, ուներ նաև արհմիություններ ու գյուղացիական միություններ, որոնք նույնպես կուսակցության կառույցի բաղկացուցիչ մասն էին: «Գիւղացիական միութիւններուն մէջ, ինչպէս և համագործակցականներուն և արհմիութիւններուն, մեր քարոզիչները կը ձգտին արթնցնել աշխատաւորութեան դասակարգային գիտակցութիւնը և զայն պատրաստել ապագա պայքարներու համար: Անոր կուսուցանեն, անմիջական շահերէ և առօրեայ կարիքներու բաւարարումէն անդին, տեսնել և հասկնալ ազատագրական պայքարներու գերագոյն իտէալը՝ ընկերվարութիւնը»,- նշված էր ՀՅԴ տեղեկագրում[4]:

ՀՅԴ տեղեկագրի մեջ կուսակցության «ռազմական մարտավարությունը» կարևորելու Ռոստոմի պահանջի ընդհանուր հունի մեջ էր Նիկոլ Դումանի մասնակցությունը Կոպենհագենի կոնգրեսին: Նրա ֆիզիկական ներկայությունը և անմիջական ելույթը կարող էին լինել խոսուն ապացույց վերոհիշյալ մարտավարության փաստարկման համար: Իրեն Կոպենհագենի համաժողով կանչելու փաստը զարմացրել է Նիկոլ Դումանին: «Նիկոլը,- գրում է Ռ. Դարբինյանը,-կը վրդովուէր յաճախ եւ միաժամանակ կը խնդար ըսելով. Զարմանալի մարդ է էս մեր Միքայէլը: Ես՝ ուր, սոցիալիստական ժողովը՝ ուր: Երեւի ուզում է ինձ սոցիալիստ դարձնել»[5]:

ՀՅԴ պատվիրակության մյուս երեք անդամներն էին Մարտիրոս Հարությունյանը (Շիրակունի - Կ. Հ.)[6], որը Ն. Դումանի հետ ներկայացնում էր ՀՅԴ Ռուսաստանյան կայսրության հատվածը, իսկ Օսմանյան կայսրության տարածքում գործող ՀՅԴ կառույցը ներկայացնում էին Արմենակ Բարսեղյանը և Միքայել Վարանդյանը:

Դանիայի Կոպենհագեն քաղաքում հրավիրված 8-րդ միջազգային սոցիալիստական կոնգրեսի աշխատանքները տևեցին 1910 թ. օգոստոսի 28-ից մինչև սեպտեմբերի 3-ը: Նրանում առաջին անգամ մասնակցության հայտ էր ներկայացրել Սալոնիկի միջազգային աշխատավորական կազմակերպությունը: Միջ.սոց.բյուրոն, նախքան կոնգրեսը, այս կազմակերպությանը Սոցինտերնի մեջ ընդգրկելու հարցի շուրջ լուրջ վերապահումներ ուներ: Այդ պատճառով նրա անունից Ք. Հյուիսմանսը նամակ էր հղել ՀՅԴ-ին՝ խնդրելով կարծիք տալ այդ կազմակերպութեան վերաբերյալ:

ՀՅԴ միջնորդությամբ Սալոնիկի միջազգային աշխատավորական կազմակերպությունը ընդգրկվեց Սոցինտերնի մեջ, սակայն մի վերապահումով. նա չէր կարող կոնգրես ուղարկել սեփական պատգամավորություն և այդ պատճառով իրենց ներկայացնելու լիազո-

---

4 Նույն տեղում, էջ 30:

5 Դարբինեան Ռ., Երկեր, հ. Ա, Համ. Վ.Սէքեան տպ, էջ 153:

6 Նա անդամ է եղել «Կովկասյան նախագիծը» պատրաստող ՀՅԴ խորհրդի, 1919 թ. ընտրվել է Հայաստանի խորհրդարանի պատգամավոր, 1938 թ. գնդակահարվել բոլշևիկների ձեռքով: Տե՛ս Յուշամատեան ՀՅ Դաշնակցութեան, Հարիւրամեակ, Ալբոմ-ատլաս, հ. Բ, էջ 146:

ությունը տվել էր բուլղար սոցիալիստներին:

Կոնգրեսի բացման արարողությունը կատարվեց մեծ շուքով: Դանիայի սոցիալիստները կազմակերպեցին 120.000-150.000-անոց աշխատավորական շքերթ, որի վերջնակետում նախատեսվում էին ականավոր սոցիալիստ հռետորների ելույթները (Ժ. Ժորես, է. Վանդերվելդե, Կ. Կաուցկի, Մակդոնալդ, Վան-Կոլ և այլք): Վերջիններիս թվում էր նաև Մ. Վարանդյանը, որը պատիվ ունեցավ նման բարձր ամբիոնից ելույթ ունենալու և արծարծելու արևմտահայության առջև ծառացած հիմնախնդիրները: Իր խոսքը հիմնականում կառուցելով ՀՅԴ տեղեկագրի բովանդակության վրա, Մ. Վարանդյանը անթաքույց կերպով ակնարկեց երիտթուրքական ռեժիմի ազգայնամոլության մասին: «Այո, անշուշտ, օսմանեան յեղափոխութիւնը տուել է հանրային իշխանութեան ղեկը տիրող «նուաճող» ազգութեան ներկայացուցիչներին, որոնք լինելով հանդերձ փոքրամասնութիւն երկրի մէջ, ձգտում են - նման մաջառ շօվէններին և աւստրիական գերմանացիներին - բռնադրել իրենց հեգեմօնիային, գերիշխանութեանը միւս «նուաճուած» ազգութիւնները - հայեր, յոյներ, բուլղարներ, արաբներ և այլն - որոնց դիտում են իբրև սոսկ կրօնական համայնքներ...»,- նկատում էր Մ. Վարանդյանը[7]:

Երկրորդ հանգամանքը, որ ցանկացավ շեշտել Մ. Վարանդյանը, դա ՀՅԴ-ի կողմից աշխատավոր ժողովրդի ուղղորդումն էր դեպի սոցիալիզմի ազատարար իդեալը: Նա զարգացրեց այն միտքը, որ Թուրքիայում, Իրանում և Կովկասում «մենք պիտի ձգտենք - ներշնչուած մեր աւստրիացի ընկերների օրինակից – հիմնել մեր փոքրիկ ինտերնացիոնալը, մէկը անհամար կորիզներից տիեզերական մեծ Ինտերնացիոնալի»[8]:

Հանդիսավոր երթի հաջորդ օրը սկսվեցին կոնգրեսի կանոնավոր աշխատանքները: Նախ խոսեցին Դանիայի սոցիալիստական շարժման առաջնորդները՝ իրենց ողջույնի խոսքը բերելով համաժողովին, ապա բացման խոսք ասաց Միջ.սոց.բյուրոյի նախագահ է. Վանդերվելդեն և ներկայացրեց կոնգրեսների միջև ընկած ժամանակահատվածում (1907 թ., Շտուտգարդ - 1910 թ., Կոպենհագեն - Կ. Հ.) սոցիալիստական աշխարհում տեղի ունեցած փոփոխությունները և մատնանշեց սոցիալիստական շարժման ձեռքբերումները:


է. Վանդերվելդե

Այնուհետև համաժողովի քննությանը ներկայացվեցին օրակարգային հետևյալ կետերը. 1. կոոպերատիվների (գործակցական ընկերություններ) և քաղաքական կուսակցությունների հարաբերությունները, 2. գործազրկության խնդիրը, 3. իրավարար ատյաններ և զինաթափություն, 4. աշխատավորական ապահովության օրենքների միջազգային արդյունքները, 5. ինչպե՞ս կազմակերպել միջազգային ցույց՝ մահվան պատժի դեմ, 6. ինչպե՞ս իրագործել, ըստ կարելիության շուտ՝ միջազգային

---

[7] Դրօշակ, 1910, յուլիս-սեպտեմբեր, N 7-9, էջ 84:
[8] Նույն տեղում, էջ 84:

Վ. Չերնով

կոնգրեսների որոշումները, 7. ինչպե՞ս կազմակերպել միջազգային համերաշխությունը, 8. մի շարք հռչակագրերի քննություն:

Վերջին կետի տակ մտնում էին հետևյալ հարցերը. ա. արհեստակցական միությունների հարցը Ավստրիայում, բ. ՀՅԴ առաջադրած բանաձևը՝ Թուրքիայում և Իրանում Ռուսաստանի վարած քաղաքականության վերաբերյալ, գ. բանաձև-բողոքը Ֆինլանդիայի վերաբերյալ: Այս երեք ենթակետերի նյութերը բաշխվեցին ընտրված 5 հանձնաժողովներին՝ ուսումնասիրության համար:

ՀՅԴ առաջադրած բանաձևը քննության ենթարկվեց 5-րդ հանձնաժողովում և մի փոքր բարեփոխումից հետո ընդունվեց միաձայն: Այդ բանաձևում բավականին մանրամասն կերպով ներկայացնելով Թուրքիայում և Իրանում «հակայեղափոխականության փոթորիկը յարուցանելու» ռուսական քաղաքականությունը, արվում էր հետևյալ եզրակացությունը. «Որ ցարիզմը, լինելով յաղթական՝ իր ազատասպան արշաւանքում սեփական պետության մէջ և խորապէս ատելով սահմանադրական կարգուսարքը իր սահմանների վրայ, ձգտում է սիստեմատիկաբար, յամառութեամբ՝ վերականգնելու բռնակալ ռէժիմը Պարսկաստանում և Թիւրքիայում: Հանդէպ այդ ծանր իրողութիւնների, որ կազմում են մշտնջենական վտանգ Արևելքի երկու երիտասարդ ռամկավարութիւնների համար՝ Կոպենհագենի Համագումարը կոչ արեց Եւրոպայի սոցիալիստական կուսակցութիւններին, օգտուելու իրենց տրամադրութեան ներքոյ գտնուած բոլոր միջոցներից՝ ցարիզմի այդ յետադէմ շահատակութիւններին վերջ դնելու նպատակով»:

Այս բանաձևը հարուցեց ռուս սոցիալ-դեմոկրատների զայրույթը: Նրանք առարկում էին, որ բանաձևում նշված չէ այն հալածանքների մասին, որ կրել են իրենք Իրանում և Ռուսաստանյան կայսրությունում: Նրանք սոցիալիստ-հեղափոխական պատգամավոր Ավկսենտիևի միջոցով ՀՅԴ ներկայացուցչին փոխանցեցին, որ իրենք տվյալ հարցը բարձրացնելու են կոնգրեսի համագումար նիստում: Սակայն ռուս սոցիալ-դեմոկրատները սահմանափակվեցին հարցը միայն հանձնաժողովում արծարծելով և համագումար նիստում չբարձրացրին:

Թուրքական պետության վերաբերյալ համաժողովին ուղղված բանաձև էր փոխանցել Սալոնիկի միջազգային աշխատավորական կազմակերպությունը՝ բուլղար սոցիալիստների միջոցով: Այս բանաձևը բավականին վիճաբանության տեղիք տվեց: Կոնգրեսի պատգամավորները առաջարկեցին մի շարք բարեփոխումներ: Թուրքիայի և բալկանյան պատգամավորության կողմից խոսեցին Մ. Վարանդյանը և Ռակովսկին: Մ. Վարանդյանը իր ելույթում շեշտը դրեց 1908 թ. հուլիսյան իրադարձություններից հետո Թուրքիայում առկա մի շարք իրողությունների վրա, որոնք անկարելի էր չնկատել: Նա վկայակոչեց երկրում տեղի ունեցող գործադուլները,

արհմիությունների փակման պատճառով սկիզբ առած խմորումները, պառլամենտում բանավեճը սոցիալական հարցերի շուրջ, Սալոնիկի միջազգային աշխատավորական կազմակերպության կազմակերպած բազմահազարանոց միտինգը և ապա բնորոշեց սոցիալիստական շարժման մասին սեփական բանաձևը. «Պրոլետարական շարժումը՝ եւրոպական Թիւրքիայում և գիւղացիականը՝ Հայաստանում»: Իսկ Ռակովսկին կենտրոնացավ հիմնականում՝ երիտթուրքերի կողմից աշխատավորական շարժման նկատմամբ իրականացվող քաղաքականության վրա: Նրա ելույթից հետո բանաձևը ընդունվեց մի քանի փոքր շտկումներով:

Դրանով ավարտվեց 8-րդ միջազգային սոցիալիստական կոնգրեսը և որոշվեց, որ հաջորդ համաժողովը պետք է տեղի ունենա 1913 թվականին Վիեննայում:

Ամփոփելով՝ պետք է նշել, որ նախ՝ Շտուտգարդի կոնգրեսից հետո, Կոպենհագենում ՀՅԴ ներկայացուցչի ունեցած ելույթը կուսակցու-թյան առաջին պաշտոնական խոսքն էր՝ ուղղված սոցիալիստական մեծ ընտանիքին: Դա շահեկան առաջընթաց էր նախորդ կոնգրեսների համեմատ, որոնցում հայության հիմնախնդիրները հիմնականում շոշափվում էին այս կամ այն սոցիալիստ պատգամավորի միջոցով: Երկրորդ՝ ուշադրության արժանի հանգամանքն այն էր, որ Շտուտգարդի համաժողովից հետո, ՀՅԴ - Միջ.սոց.բյուրո հարաբերությունները տեղափոխվել էին որակապես այլ մակարդակ: Ակնհայտ էր, որ Օսմանյան կայսրությունում Սոցինտերնին հետաքրքրող հարցերում ՀՅԴ կարծիքն արդեն ուներ ծանրակշիռ դեր, ինչը ցցուն կերպով դրսևորվեց Կոպենհագենի համաժողովում՝ Թուրքիային վերաբերող հարցերի քննարկման և բանաձևերի ընդունման ընթացքում: Իսկ երրորդ կարևոր հարցն այն էր, որ Կոպենհագենի կոնգրեսին Ռուսաստանյան կայսրությունում պայքարի մարտավարության հետ կապված ՀՅԴ առաջարկը անարձագանք չմնաց:

Կոպենհագենի կոնգրեսի փակումից անմիջապես հետո, Դանիայի մայրաքաղաքում, Ռուսաստանյան կայսրության մի շարք սոցիալիստական կուսակցությունների մասնակցությամբ գումարվեց միջկուսակցական, ոչ պաշտոնական խորհրդաժողով: Այս առիթով «Դրօշակը» գրում էր. «Դա մասամբ մի տեսակ պատասխան-արձագանք էր Հ.Յ.Դաշնակցութեան վերջին (Վառնայի) Համագումարի ընդունած որոշումին ու կոչին»: Այս միջկուսակցական խորհրդաժողովը նպատակ էր հետապնդում շփվել իրար հետ, ծանոթանալ Ռուսաստանի տարբեր երկրամասերում տիրող կացությանը և կուսակցությունների կազմակերպվածության աստիճանին ու վերսկսել մինչև ռուսական առաջին հեղափոխությունը տեղի ունեցած կոնֆերանսները և խորհրդաժողովները, որոնք ընդհատվել էին ռեակցիայի տարիներին: Այսպիսով Ռուսաստանյան կայսրությունում գործող կուսակցությունների միջկուսակցական խորհրդաժողովը Կոպենհագենի համաժողովի շարունակությունն էր:

Խորհրդաժողովին ներկա էին ռուս սոցիալիստ-հեղափոխականների, Լեհական սոցիալիստական կուսակցության (P.P.S.), Լատիշական սոցիալ-դեմոկրատական միության, Հրեական «Սերպի» և ՀՅԴ ներկայացուցիչները: Դրանք էին՝ Բ. Լիմանովսկին և Վրոնսկին՝ Լեհական սոցիալիստական կուսակցությունից, Նատանսոնը, Վոլխովսկոյը, Չերնովը, Ակսենտիևը, Արարատսկին, Ռուբանովիչը, Բունակովը, Նիկոլաևը և այլք՝ ռուս սոցիալիստ-հեղափոխականների կուսակցությունից, Ն. Դումանը, Մ. Հարությունյանը, Մ. Վարանդյանը՝ ՀՅԴ-ից:

Խորհրդաժողովին հրավիրվել էր նաև ռուսական սոցիալ-դեմոկրատիայի «Օսզովիստ» կոչվող շատ թե քիչ մարտական հատվածի ներկայացուցիչը՝ Վոյնովը, որը սկզբում տալով իր համաձայնությունը, այնուամենայնիվ չներկայացավ՝ թերևս կուսակիցների դիմադրության պատճառով: Հյուրի կարգավիճակով հրավիրված էին նաև ֆիննական սոցիալ-դեմոկրատիայի ներկայացուցիչներ՝ թվով երկու հոգի:

Խորհրդաժողովի աշխատանքները արձանագրող երկու քարտուղար նշանակելուց հետո, տեղի ունեցավ խորհրդաժողովի բացումը: ՀՅԴ կողմից բացման խոսքով հանդես եկավ Մ. Վարանդյանը: Նա հայտարարեց, որ ՀՅԴ 5-րդ

Delegates to the 1910 Copenhagen Congress.

ընդհանուր ժողովը. «...միաձայն բաղձանք է յայտնել, որ Ռուսաստանի այլևայլ սոցիալիստական ու յեղափոխական հատուածները միանան ընդհանուր գործողութեան մէջ, ընդհանուր բռնապետական թշնամու դէմ, և միաձայն նաև որոշել է, որ կազմակերպութեան պատշաճ մարմինները դիմումներ անեն այդ նպատակով»[9]: Մ. Վարանդյանը հիմնավորեց այդ որոշման անհրաժեշտությունը և արդիականությունը: Կոնկրետացնելով նման «ընդհանուր գործակցության» պարագայում անհրաժեշտ մարտավարությունը, ՀՅԴ-ն գտնում էր, որ հարկավոր է իրականացնել «...յեղափոխական, *մարտական ուժերի* որոշ համերաշխ գործակցութիւն, կոորդինացիա...»[10]:

Վերոհիշյալ առաջարկությունը բխում էր ՀՅԴ 5-րդ ընդհանուր ժողովի որոշումներից և, բացի այդ, ՀՅԴ-ի համար դա փորձարկված և արդարացված մարտավարություն էր: Մ. Վարանդյանի ելույթը դրական արձագանք գտավ խորհրդաժողովի մասնակիցների մեջ և նրանք պահանջեցին նիստը ղեկավարող Վ. Չերնովից, որպեսզի խորհրդաժողովին մասնակցող կուսակցությունների ներկայացուցիչները զեկույցներ ներկայացնեն իրենց կազմակերպական վիճակի և գործելավայրի մասին՝ առանձնապես շեշտը դնելով մարտական խնդիրների վրա:

Առաջինը խոսք վերցրեց Լեհական սոցիալիստական կուսակցության ներկայացուցիչ Վրոնսկին: Ներկայացնելով իրավիճակը և

---

9 Դրօշակ, 1910, յուլիս-սեպտեմբեր, N 7-9, էջ 90:
10 Նույն տեղում:

կուսակցության իրականացրած քայլերը, նա խորհրդաժողովին հաղորդեց իրենց կուսակցության վերջին ընդհանուր ժողովի որոշումները, որտեղ շեշտադրում էր արվում ժողովրդի լայն խավերում մարտական պատրաստվածության և աշխատավոր դասակարգի զինման հարցերի վրա:

Ռուսաստանյան սոցիալիստ-հեղափոխականների զեկույցում, որը ներկայացրեց Վ. Չերնովը, առաջ էին քաշվում անհատական ահաբեկչությունը զանգվածային դարձնելու և զորքերում ամուր հենարաններ ստեղծելու գաղափարները:

ՀՅԴ գործունեության մասին խորհրդաժողովին առանձին զեկույց ներկայացրած Մարտիրոս Հարությունյանը անդրադարձավ կուսակցության իրականացրած ծրագրային փոփոխություններին և դրանց հետևանքներին: Խորհրդաժողովի մասնակիցներին հետաքրքրեց ՀՅԴ-ի կողմից Կովկասում ցարական վարչակազմի դեմ պայքարը, հայ-թուրքական ընդհարումների ժամանակ ինքնապաշտպանական մարտերի կազմակերպման մարտավարության ձևերն ու եղանակները, ՀՅԴ մարտական ներուժ-կարողականությունը: Այդ մասին նրանց տեղեկություն տվեց և բոլոր հարցերին պատասխանեց Նիկոլ Դումանը, որի ներկայությունը պատահական չէր: Ո՞վ, եթե ոչ նա, կարող էր լավագույնս պատասխանել ՀՅԴ-ին ուղղված հարցումներին և իր հարուստ կենսափորձով հիմնավորել ՀՅԴ մարտավարությունը: Ն. Դումանը անդրադառնալով կուսակցության մարտական ներուժին նշեց, որ «Դաշնակցության ռազմական կուսակցությունը Կովկասում, բարեբախտաբար, չի ջախջախվել, քանի որ կառավարությունը չի կարողացել այն բացահայտել: Կառավարությանը հայտնի էին միայն զինվորական առաջնորդներից մի քանիսը, որոնք ժամանակին կարողացան տեղափոխվել արտասահման: Այսպիսով Դաշնակցությունը Կովկասում այժմ ունի ոչ թե գեներալներ առանց բանակի, այլ հակառակը, բանակ՝ առանց գեներալների»[11]: Նիկոլ Դումանը ուշադրություն էր դարձնում այն փաստի վրա, որ «Դաշնակցութիւնը» սկզբից ի վեր - Թիւրքիայում, Կովկասում, Պարսկաստանում - եղել է նախ և առաջ *յեղափոխական-ինքնապաշտպանական* կազմակերպութիւն. նա կռուել է տարրական ազատութիւնների համար, նա եղել է միաժամանակ ամենահզօր պատնէշը Կովկասի մէջ՝ հակայեղափոխական յորձանքների դէմ»[12]:

Այս խոսքերով ավարտված Նիկոլ Դումանի ելույթը մեծ հետաքրքրություն առաջացրեց խորհրդաժողովի մասնակիցների մեջ, առանձնապես՝ զինված ապստամբության, քաղաքային պայմաններում փողոցային կռիվներ մղելու հարցերի հետ կապված: Այս կապակցությամբ Նիկոլ Դումանը հետագայում նշում էր. «Մեր Միքայէլն էլ շատ պնդեց, որ մի *բրոշիւրի* չափ բան գրեմ այդ նիւթի մասին: Ճար չունէի, համաձայնուեցի եւ հիմա տանջւում եմ, որ յանձն եմ առել գրելու»[13]: Նիկոլ Դումանի այդ բրոշյուրը հետագայում տպագրվեց հայերեն և ռուսերեն լեզուներով և դարձավ մի յուրահատուկ ուղեցույց Ռուսաստանյան կայսրության հեղափոխական կուսակցությունների համար:

Նիկոլ Դումանի ելույթին հաջորդեցին մի շարք այլ ելույթներ և ընդունվեց որոշում: Որոշման մեջ մասնավորապես ասվում էր, որ սոցիալիստ-հեղափոխականները, Լեհական սոցիալիստական կուսակցությունը և ՀՅԴ-ն մոտ ապագայում կհրավիրեն խորհրդաժողով՝ Ռուսաստանյան կայսրության մեջ գործող սոցիալիստական ուժերի մասնակցությամբ, որպեսզի սահմանեն «համերաշխ գործակցութիւն ապագայ քաղաքական ձեռնարկների համար»[14]: Որոշման արձանագրությունը ստորագրեցին խորհրդաժողովի երեք խոշոր հատվածների՝ Ռուսաստանի սոցիալիստ-հեղափոխականների, Լեհական սոցիալիստական կուսակցության և ՀՅԴ ներկայացուցիչները:

Այսպիսով Կոպենհագենի միջազգային սոցիալիստական կոնգրեսին հաջորդած Ռուսաստանի սոցիալիստական մի շարք ազդեցիկ կուսակցությունների խորհրդաժողովը թույլ տվեց կատարել ուժերի, գործելաոճերի և իրավիճակի սթափ գնահատում, քննարկման ենթարկել՝ ցարիզմի դեմ պայքարում արդյունավետ մարտավարություն որդեգրելու հարցերը:

---

11 Գևորգյան Հ., Նիկոլ Դուման, Երևան, 2002, էջ 357:
12 Դրօշակ, 1910, յուլիս-սեպտեմբեր, N 7-9, էջ 94:
13 Դարբինեան Ռ., նշվ. աշխ., էջ 154:
14 Դրօշակ, 1910, յուլիս-սեպտեմբեր, N 7-9, էջ 94:

ԷԴԻԿ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ՝ ՂԱՐԱԲԱՂԵԱՆ ՊՈՌԹԿՈՒՄԸ, ՍՓԻՒՌՔԸ, ՄԻՒՆԽԵՆԻ ՄԵՐ ԿԵԴՐՈՆԸ

Ադամակագիր, հրապարակագիր, Բոստոնի հայկական անկախ ձայնասփյուռի հիմնադիր տնօրեն Ժիրայր Ղարիբյանը Հայաստանի անկախության հռչակումից, Արցախի ազատագրական շարժման սկզբնավորումից ի վեր բազմիցս, հաճախ տարին մի քանի անգամ եղել է Հայաստանում, արտերկրի տարբեր գաղթօջախներում, հարցազրույցներ ունեցել ժամանակի հայ նշանավոր քաղաքական, գրական, մշակութային գործիչների հետ, իր մեկնաբանություններով հաղորդել Բոստոնի հայկական ձայնասփյուռով:

Այժմ, զրուցավարի անժամանակ մահից հետո, երբ այրու՝ տիկին Եվգինե Ղարիբյանի ցանկությամբ, եկել է այդ հարցազրույցների լավագույն մասը հրապարակելու ժամանակը, սիրով, «Դրոշակի» ընթերցողներին եմ ներկայացնում Հայկական հարցերի հաստատության վարիչ, դոկտոր Էդիկ Հովհաննիսյանի հետ 1988 թ.-ի մայիսի 19-ին Բոստոնում կայացած հարցազրույցը, որը ոչ միայն վավերական պատկերացում է ստեղծում տվյալ շրջադարձային ժամանակաշրջանի, տիրող՝ երբեմն մարգարեական, երբեմն հակասական մտայնությունների մասին, այլև զարմանալիորեն արձագանքում է արդի՝ նույնքան շրջադարձային ժամանակաշրջանին և նույնիսկ որոշակի լուծումներ առաջադրում:

ԳՐԻԳՈՐ ՉԱՆԻԿՅԱՆ

Ժ. Ղ. - **Սիրելի Էդիկ, անցեալ տարի շահեկան հարցազրոյց մը ունեցայ Ձեզի հետ, որ երկու անգամներով սփռեցինք եւ մեծ արձագանգ ունեցաւ: Այժմ մէկ տարի անց, քանի մը այժմէական հարցումներ կ'ուզեմ Ձեզի ուղղել եւ խնդրել, որ Ձեր կարծիքները փոխանցէք մեր ունկնդիրներին:**

Սկսիմ Ղարաբաղեան հարցով: Ղարաբաղի պոռթկումը կը հանդիսանայ մեր ազգային դատի անկիւնադարձային երեւոյթներէն մէկը: Մինչեւ այժմ կատարուածին լոյսին տակ ինչպիսի՞ հետեւանքներ կը նախատեսէք:

Է. Յ. - Ղարաբաղի իրադարձութիւնները, իսկապէս, չափազանց կարեւոր են մեր ազգային կեանքում, որոնք մեկնաբանելու համար, նախ, գոնէ համառօտ ձեւով, պէտք է պարզել, թե որտեղի՞ց եւ ինչպէ՞ս ծագեց Ղարաբաղեան շարժումը: Այդ դէպքերը անսպասելի չէին, Ղարաբաղի հարցը, այսպէս ասած պոռթկումները, մենք միշտ ունէինք, սկսած ղարաբաղցիների՝ Խրուշչեւին, Բրէժնեւին, Գորբաչովին ուղղուած նամակներից: Սերօ Խանզատեանի, Սիլվա Կապուտիկեանի, այլոց ելոյթները ցոյց են տալիս, որ հէնց մեր երկրում ստեղծուել է որոշ ժողովրդավարութիւն, խօսելու ազատութիւն, հայերը անմիջապէս բարձրաձայնել են իրենց յուզող հարցերը: Այն ուժգնութեամբ, որը թոյլ է տուել տուեալ ժամանակի ժողովրդավարութիւնը: Գորբաչովը խորհրդային բոլոր, այդ թւում հայ ժողովուրդին ընձեռնեց նման հնարաւորություն, պատահական չէ, որ Ղարաբաղի դէպքերին նախորդեցին Ղրիմի թաթարների, մերձբալթեան հանրապետութիւնների պահանջները: Կարելի է նոյնիսկ ասել, որ Ղարաբաղեան շարժումը որոշ առումով անսպասելի էր հայաստանցիների համար, որովհետեւ Երեւանի միլիոնանոց ցոյցերը սկսեցին այն ժամանակ, երբ ղարաբաղցիները հասան Հայաստան եւ հաղորդեցին Մայր Հայրենիքին վերամիաւորուելու իրենց կամքն ու վճռականութիւնը: Հայաստանցիները, բնական է, պաշտպան կանգնեցին իրենց եղբայրներին:

Ուրեմն, առաջին եզրակացութիւնը՝ Ղարաբաղեան շարժումը Գորբաչովեան ժողովրդավարութեան ծնունդն էր:

Ինչպէ՞ս ընթացան դէպքերը: Հէնց այն պատճառով, որ Ղարաբաղի իրադարձութիւնները գորբաչովեան վերակառուցման արգասիք էին, անմիջապէս արժանացան հակագորբաչովեան դիմադարձութեանը: Ղարաբաղի հարցը դարձաւ գորբաչովեան եւ հակագորբաչովեան թեւերի պայքարի թեմա: Հակագորբաչովեան թեւի մէջ են մտնում ներկայ Հայաստանի ամբողջ կառավարութիւնը՝ Կարէն Դէմիրճեանն իր կողմնակիցներով, Ատրբպէյճանում՝ Ալիեւն ու իր նշանակած ղեկավարները: Քանի որ Գորբաչովը Ալիեւին դուրս նետեց ԽՄԿԿ քաղբիւրոյից, նա դարձաւ հակագորբաչովեան ու փաստօրէն կազմակերպեց էն նախճիրները, որոնք տեղի ունեցան Սումգայիթում, Աղդամում, Ստեփանակերտում, այլուր: Ատրբպէյճանցիները ուզեցին անմիջապէս ցոյց տալ Գորբաչովին, որ իր ազատութիւնները աւելի վտանգաւոր երեւոյթներ կարող են առաջացնել, քան էն խաղաղ ցոյցերը, որ կատարում են հայերը: Այդպէս պատահեց, որ Ատրբպէյճանում հակագորբաչովեան թեւը յաղթեց:

Այս կապակցութեամբ կարելի է մի քանի մանրամասնութիւններ աւելացնել: Հետաքրքրական է, որ երբ Գորբաչովը գտնւում էր Հարաւսլաւիայում, հակագորբաչովեան թեւի ղեկավար Լիգաչովը խորհրդակցութեան հրաւիրեց կեդրոնական հանդէսների խմբագիրներին, բացի «Մոսկովսկիէ նովոստի»՝ այսինքն «Մոսկովեան նորութիւններ», եւ «Օգոնեոկ»՝ «Կայծ», հանդէսների ղեկավարներից, որոնք գորբաչովեան վերակառուցման կողմնակիցներ էին: Այդ խորհրդակցութիւնից յետոյ ամբողջ խորհրդային մամուլը, առաջին հերթին «Սովետսկայա Ռոսսիա»՝ «Խորհրդային Ռուսաստան» թերթը հրատարակեցին յօդուածներ, որոնք յետագայում հակագորբաչովեան, հակաժողովրդավարութեան ու հակավերակառուցման հրովարտակներ համարուեցին: Հենց էդ ժամանակամիջոցում խորհրդային Միութեան Գերագոյն Խորհուրդը Գրոմիկոյի ղեկավարութեամբ ընդունեց Ղարաբաղի կարգավիճակը չփոխելու որոշումը: ՏԱՍՍ լրատուական գործակալութիւնը հաղորդեց, որ այդ նիստի ժամանակ ելոյթ է ունեցել Միխայիլ Գորբաչովը, սակայն յետագայում նրա ելոյթը ոչ մէկ թերթ չհրատարակեց: Ինչն էլ մեզ թոյլ է տալիս մտածել, որ հայանպաստ էր: Բարեբախտաբար Գորբաչովը կամաց-կամաց սկսեց ճնշում գործադրել իր հակառակորդների վրայ, եւ արդիւնքը եղաւ էն, որ «Սովետսկայա Ռոսսիա» թերթը ներողութիւն խնդրեց իր հակագորբաչովեան հրապարակումների համար: Եւ էդ օրուանից խորհրդային մամուլում երեւացին յօդուածներ, որոնք ցոյց էին տալիս, որ Գորբաչովի ղեկավարած կառավարութիւնը Ղարաբաղի հարցում որոշ թուլացում է ցուցաբերում: Ամենահետաքրքիրը ակադեմիկոս Սախարովի յօդուածն է, որտեղ ասում է. «Ես կառավարական որոշումը չեմ համարում վերջնական եւ պահանջում, խնդրում եմ, որ հարցը վե-

րանայուի յօգուտ ղարաբաղցիների»: Այդպէս է կարծում ոչ միայն ակադեմիկոս Սախարովը, այլեւ, ընդհանրապէս, ռուս մտաւորականութեան մեծ մասը: Մամուլում անգամ խորհրդային իրաւաբանների յօդուածներ երեւացին, որոնք հարցնում էին՝ «Իսկ ո՞վ է ասել, որ ԽՍՀՄ հանրապետութիւնների սահմանները չեն կարող վերանայուել»: Իրաւաբանօրէն նրանք ապացուցում էին, որ էդպիսի փոփոխութիւններ միշտ էլ եղել են, ուրեմն հնարաւոր է նաեւ, որ ապագայում լինեն: Հարց է ծագում՝ ի՞նչ է մեզ սպասում, ի՞նչ ակնկալիքներ կարող են լինել: Քանի որ Ղարաբաղի հարցը ծնուեց ժողովրդավարութեան մթնոլորտում, ամեն ինչ կախուած է նրանից, թէ Գորբաչովի թեւը կը յաղթի՞ հակագորբաչովեան պայքարում: Եթէ գորբաչովեան թեւը պարտուի, Ղարաբաղը Նախիջեւանի օրը կընկնի, ատրպէյճանցիները կսկսեն նոր հակահայ արշաւ. հայերին Ղարաբաղից փաստօրէն դուրս կը նետեն: Գորբաչովի յաղթանակի հետ միասին, անշուշտ, ամբողջովին կը փոխուի Հայաստանի ղեկավարութիւնը, որը Ղարաբաղի հարցում իրեն շատ վատ պահեց, վատ է պահում մինչեւ այսօր, քանի որ երեք հազար սումգայիթցի փախստականներ փաստօրէն քաղաքական ապաստան են խնդրում իրենց հայրենիքում, բայց նրանց բռնի վտարում են, ու նրանք փախչում են Ռուսաստան, որովհետեւ Սումգայիթ վերադառնալ չեն ուզում: Պատահական չէ, որ Ղարաբաղի հարցի առընչութեամբ Գորբաչովը ընդունում է մտաւորականներին՝ Սիլվա Կապուտիկեանին, Զօրի Բալայեանին, այլ ոչ թէ Կարէն Դէմիրճեանին՝ շատ լաւ իմանալով, որ վերջինս ո՛չ Ղարաբաղի եւ ոչ էլ հայ ժողովուրդի ներկայացուցիչն է: Ուրեմն հարցի պատասխանը հետեւեալն է՝ Խորհրդային Միութիւնում ժողովրդավարութեան յաղթանակի հետ է կապուած Ղարաբաղի հարցի դրական լուծումը:

Ժ. Ղ. – Մամուլէն տեղեկացանք, որ «Ոգնի» երգիծաթերթի խմբագիր Արամայիս Սահակեանը Երեւանի հեռատեսիլէն անկաշկանդ յայտարարած է՝ «Ժամանակն է դրական երկխօսութիւն սկսելու ՀՅԴ-ի հետ»: Անշուշտ նոր անկիւնադարձ մըն է, որ հայրենի մտաւորականութիւնը օգտուելով գորբաչովեան բացխօսութենէն որոշած է համարձակ արտայայտուիլ: Ի՞նչ կրնայ ըլլալ հաւանական գործնական արդիւնքը այս յայտարարութեան:

Է. Յ. - Եթէ ուզէի կարճ պատասխանել, պիտի պատասխանէի գրեթէ էնպէս, ինչպէս պատասխանեցի առաջին հարցին: Այսինքն՝ թէ՛ Դաշնակցութեան, թէ՛ Սփիւռքի եւ թէ մեր պատմական արժեքների մասին խօսելու հնարաւորութիւնները գորբաչովեան յաղթանակի հետ են կապուած: Դժբախտաբար վերակառուցման ազատութիւնները դանդաղ են մուտք գործում Հայաստան: Երբ համեմատում ես կեդրոնական մամուլը Հայաստանի մամուլի հետ, թւում է, թէ տարբեր երկրների ես առընչւում: Հայկական մամուլը գորբաչովեան ազատութիւններից գրեթէ չի օգտուում: Ինչ վերաբերում է Սահակեանի յայտարարութեանը, շատ հետաքրքրական է, բայց առաջինը չէ, նրանից առաջ Սիլվա Կապուտիկեանը բացայայտօրէն ասաց՝ «Մինչեւ ե՞րբ մենք պէտք է Դաշնակցութիւնը համարենք մեր թշնամին: Այդ ինչպէ՞ս պատահեց, որ բուրժուա ռամկավարները դարձան մեր բարեկամները, Բէյրութի կամ Սիրիայի կօշկակար դաշնակցականը մնաց մեր դասակարգային թշնամին»:

Կամաց-կամաց մտաւորականութիւնը զգաց ազատութեան էսպէս ասած առաւելութիւնները, եւ «Ոգնի» խմբագիրը՝ Արամայիս Սահակեանը իր հանդէսում հրատարակեց Զօրի Բալայեանի «Հիմա՞ էլ լռենք» յօդուածը, որը հայաստանեան ոչ մի թերթ չէր համարձակուել հրատարակել: Բալայեանը փաստօրէն ասում է՝ «Եղբայր, հիմա բոլորը խօսում են, ամբողջ Ռուսաստանը ազատագրուել է խօսելու իմաստով, մենք ինչո՞ւ պիտի չխօսենք, հիմա՞ էլ լռենք»: Դրանից յետոյ Կարէն Դէմիրճեանը ելոյթ ունեցաւ Կենտկոմի պլենումի նիստում եւ յայտարարեց՝ «Ոմանք իրենց երգիծական հանդէսների էջերը տրամադրում են իրենց մամուլին ոչ վայել յօդուածների»: Ինչ որ իմաստով դա, իհարկէ, ճիշտ էր, յօդուածը շատ լուրջ էր երգիծական հանդէսում հրատարակուելու համար, բայց ի՞նչ անեն Զօրի Բալայեանը եւ նրա նմանները՝ մնացած «լուրջ» հանդէսները իրենց չեն տպագրում:

Հիմա հարցի էն մասը, որը կապուած է ապագայի հետ: Ես կրկին կարծում եմ, որ եթէ գորբաչովեան թեւը յաղթանակ տանի, մենք, ինչպէս ինքն է յայտարարել, կը կարողանանք ջնջել պատմութեան սպիտակ կէտերը: Դաշնակցութիւնն իր անցեալով անպայման պէտք է վերականգնուի Հայրենիքում, որովհետեւ յարգանքը դէպի այդ կուսակցութիւնը ժողովրդի մէջ միշտ կար, հիմա պաշտօնապէս կարող է արտայայտուել: Դաշնակցութիւնը որպէս սոցիալիստական կուսակցութիւն, մանաւանդ վերջին տասնհինգ-քսան տարիների ընթացքում լուրջ հակախորհրդային պայքար չի մղել, միակ վիճելին, եթէ կարելի է այդպէս ասել, փետրուարեան ապըս-

տամբութիւնն է: Ես հիմա այդ շրջանը մանրամասն ուսումնասիրում և ուզում եմ յիշեցնել Լենինի արտայայտութիւնը՝ «Եթէ մեզ հաւատարիմ հայերը ապստամբեցին, նշանակում է ինչ որ սխալ գործել ենք»: Այսինքն ինքը՝ Լենինն էլ է ընդունում, որ բոլշեւիկեան ճնշումը այնքան դաժան էր, որ տեղի տուեց փետրուարեան ապստամբութեանը: Վերջին հաշուով, եթէ Դաշնակցութիւնը նոյնիսկ մինչեւ փետրուարեան ապստամբութիւնը այսպէս ասած արդարացուի, իսկ Գորբաչովի յաղթանակով կասկած չունեմ, որ պիտի արդարացուի, ուրեմն ամեն ինչ լաւ կը լինի: Խրուշչովը մեզ նուիրեց Մեծ Եղեռնի ու Սարդարապատի յուշարձանները, հաւանաբար Գորբաչովն էլ կը նուիրի Մայիսի քսանութը:

Ժ. Ղ. – Անմիջական հետեւանքը ի՞նչ կրնայ ըլլալ: Արդեո՞ք քաղաքական կուսակցութիւնները կրնան երթալ եւ Հայաստան գործել:

Է. Յ. - Ոչ: Դեռեւս Խորհրդային Միութեան ժողովրդավարութիւնը չի հասել այդ աստիճանի, որ թոյլատրուեն ուրիշ կուսակցութիւններ: Սակայն դա ոչինչ չի նշանակում, ամեն երկիր, հէնց Խորհրդային Միութիւնը, արտասահմանում ունի բարեկամ կուսակցութիւններ, կազմակերպութիւններ: Նոյն Խորհրդային Միութիւնը իրեն համարում է պաղեստինցիների դատի լաւագոյն բարեկամը, բայց դա չի նշանակում, որ պաղեստինցիները կարող են Խորհրդային Միութիւնում կուսակցութիւններ ստեղծել: Բայց որ Սփիւռքի կուսակցութիւնները, կազմակերպութիւնները կարող են օգնել, համակրելի դառնալ Խորհրդային Միութեանը, քանի որ մենք էնտեղ Հայաստան ունենք, փաստ է: Վերջին հաշուով գորբաչովեան գրքերից իմանում ենք, որ Դաշնակցութեան գաղափարախօսութեան ու էն ամենի մէջ, ինչ առաջարկում է Գորբաչովը, տարբերութիւն գրեթէ չկայ:

Գորբաչովը յայտարարում է, որ ընկերվարութիւնը չի կարող լինել առանց ժողովրդավարութեան, ինչպէս ժողովրդավարութիւնը առանց ընկերվարութեան: Էս թեզերը մեզ էլ հարազատ են, էնպէս որ, կարծում եմ, Գորբաչովի յաղթանակի հետ մէկտեղ փոխյարաբերութիւնները շատ ու շատ կարող են լաւանալ:

Ժ. Ղ. – Շուտով Հայաստանի անդրանիկ հանրապետութեան եօթանասունամեակն է: Այսօրուայ Խորհրդային Հայաստանը փաստօրէն շարունակութիւնն է 1918 Մայիս 28-ին հռչակուած Հայաստանի Հանրապետութեան: Գորբաչովեան վերակառուցումը կրնա՞յ առանց հակադրուելու Խորհրդային Միութեան ներկայ Սահմանադրութեանը, քաղաքականօրէն աւելի ինքնավար հայկական հանրապետութիւն մը արտօնել:

Է. Յ. - Այո, ես կարծում եմ, որ էդ հնարաւորութիւնը կայ: Նախ էն գաղափարը, որ այսօրուայ Հայաստանը շարունակութիւնն է Մայիս 28-ին ստեղծուած Հայաստանի, անկասկած պաշտօնականացուելու է: Ես համոզուած եմ դրանում այն իմաստով, որ դպրոցականն անգամ գիտի՝ եթէ չլինէր անկախ Հայաստանը, չէր լինի Խորհրդային Հայաստանը, որը Սարդարապատում թափուած արեան հիման վրայ ստեղծուեց: Ցաւօք ոչ բոլորը գիտեն, որ Հայաստանի խորհրդայնացման համար յեղափոխութիւն տեղի չունեցաւ, այն ժամանակուայ դաշնակցական կառավարութիւնը երկիրը կամաւոր յանձնեց խորհրդային իշխանութեանը: Այնուամենայնիվ Մայիս 28-ը որպէս սկիզբ Խորհրդային Հայաստանի անկախութեան՝ անկախութեան այն իմաստով, որ Հայաստանը անջատուի Խորհրդային Միութիւնից, երբեք չի ընդունուի, ինչպէս չի ընդունում շատ ու շատ ժողովրդավարական երկրներում: Անգլիան նոյն վերաբերմունքն է ցոյց տալիս իռլանդացիների, Իսպանիան՝ բասկերի նկատմամբ: Էլ չը խօսենք Իսրայէլի եւ արաբների փոխյարաբերութեան մասին: Բայց Գորբաչովը խոստացաւ, որ ԽՄԿԿ Կենտկոմի մօտակայ լիագումար նիստերում պէտք է քննարկուեն ազգային հարցերը եւ հանրապետութիւններին թէկուզ տնտեսական ճանապարհով որոշ ազատութիւններ տրուեն: Եթէ ապակեդրոնացուի տնտեսական ղեկավարումը, Հայաստանը տէր կը դառնայ իր տնտեսութեանը, որ արդէն մեծ բան է: Սա նշանակում է, որ Հայաստանի կառավարութիւնը իշխանութիւն կ'ունենայ իր երկրում աշխատող գործարանների վրայ, ինքն իր կամքով կը կարողանայ բացել կամ փակել, ասենք, կաուչուկի գործարանը, արտասահմանի հետ կապեր հաստատել, տարբեր ընկերութիւնների հետ պայմանագրեր կնքել եւ այլն:

Ժ. Ղ. – Սիրելի Էդիկ, 17 տարիներ կ'ըլլայ, որ Հայաստանէն դուրս էք: Մեր անցեալ տարուան հարցազրոյցի ընթացքին Սփիւռքի եւ Սփիւռքի մէջ գործող քաղաքական կուսակցութիւններու մասին յուսահատական կարծիք յայտնեցիք: Հայրենի իրականութիւնը, Ղարաբաղի պոռթկումը եւ ամեն օր ի յայտ եկող նորութիւնները նկատի ունենալով,

ի՞նչ կը մտածեք ներկայ Սփիւռքի, հայ քաղաքական կուսակցութիւններու զարգացման հոլովոյթի մասին:

Է. Յ. - Սփիւռքահայ կուսակցութիւնների, կազմակերպութիւնների վերաբերեալ իմ դժգոհութիւնը նոյնն է եւ այսօր: Այդ դժգոհութեան բուն էութիւնը կայանում է նրանում, որ չի կարող հողից կտրուած Սփիւռքի որեւէ կուսակցութիւն, կազմակերպութիւն գոյութիւն ունենալ, այսինքն այնպիսի կուսակցութիւն, կազմակերպութիւն, որի գործունէութիւնը սահմանափակուի միայն արտերկրով: Կարծում եմ՝ Ղարաբաղի դէպքերը ցոյց տուեցին, որ եթէ Հայաստանից դուրս ապրող հինգ միլիոն հայութիւնը հայաստանեան իրադարձութիւններից հեռու մնայ, ապա ինքներս մեզ կը պատժենք, կը զրկենք, եւ այլն, եւ այլն: Բայց ես արդէն զգում եմ, որ սփիւռքահայ կազմակերպութիւնները կամաց-կամաց կեդրոնացնում են իրենց ուշադրութիւնը Հայաստանի վրայ. դեռ չեմ կարող ասել, թէ ինչ կարելի է անել, բայց առայժմ ուզում եմ, որ ապրենք մեր հայրենակիցների ցաւերով: Եթէ տեսնում ենք, որ այնտեղ մէկ միլիոն հայութիւն ցոյց է կազմակերպում ինչ որ բանի դէմ, մենք այստեղ ամեն կերպ պիտի սատարենք: Սատարենք, ինչո՞ւ չէ, նոյնիսկ նիւթապէս: Հենց հիմա, օրինակ, երեք հազար սումգայիթցիներ լքում են Հայաստանը, որովհետեւ դրամական միջոցներ չունեն: Ինչո՞ւ մենք չենք կարող նրանց օգնել: Կամ՝ այն տասնչորս հազար հայութեանը, որ էս տարի յայտնի դարձաւ, Հայաստանից դուրս է գալիս. մենք պէտք է նրանց տէր կանգնենք, բացատրենք, թէ ի՞նչ է իրենից ներկայացնում մեզ քաջ ծանօթ արտասահմանը, ստեղծենք էն կապը, որը մինչեւ հիմա դժբախտաբար գոյութիւն չի ունեցել: Խորհրդային Հայաստանի, Սփիւռքահայութեան կոմիտէի ներկայացուցիչները եկել են արտասահման և յայտարարել, որ սրա հետ պիտի չշփուեն, նրան պիտի Հայաստան հրաւիրեն, և այլն: Մենք պիտի լուրջ քաղաքական մօտեցում ցոյց տանք ազգային ամեն մի երեւոյթի, լինենք մէկ ազգ. մէկ՝ մեր ընդհանուր խնդիրներով: Գուցէ խորհրդային ժողովրդավարութիւնը նպաստի դրան ու հնարաւորութիւն ունենանք աւելի ազատ գնալ Հայաստան, հայաստանցիներն աւելի ազատ գան արտասահման եւ ստեղծուի այն միասնութիւնը, որին այսքան տարիներ ձգտում էինք:

Ժ. Ղ. – Երկու խօսք Միւնիխի Հայկական հարցերու հաստատութեան մասին: Ի՞նչ ընթացքի մէջ են աշխատանքները, ի՞նչ նոր ծրագիրներ ունիք:

Է. Յ. - Միւնխենի Հայկական հարցերի հաստատութիւնը դժբախտաբար մենք չկարողացանք հասցնել այնպիսի մակարդակի, որպէսզի կատարենք նախատեսուող բոլոր խնդիրները, որոնք կապ ունեն Հայ Դատի հետ: Ինչպէս գիտեք, սկսել ենք հայկական ցեղասպանութեան փաստաթղթերի տասը հատորանոց հանրագիտարանի հրատարակումը, առաջին հատորն արդէն հրապարակի վրայ է: Ցաւօք, չի վաճառում: Երկրորդ հատորը արդէն շարուած է, մէկ ամիս յետոյ լոյս պիտի տեսնի: Երրորդ հատորը պատրաստ է, շուտով տպարան կը յանձնուի: Մեր երկրորդ հիմնական գործը գերմանախօս մամուլում հայերի մասին հրապարակուած յօդուածների ժողովածուն կազմելն է, արդէն ունենք տասը տարուայ նիւթերը, որոնք շատ հետաքրքրական են: Եթէ առաջ հայերին առընչուող յօդուածների թիւը տարեկան հասնում էր 100-200-ի, ապա Ղարաբաղի դէպքերից յետոյ 3500-ը անցնում է, որոնց վերլուծութիւնը չափազանց դժուարացել է: Սա, ինչպէս ասացի, մեր երկրորդ աշխատանքն է, որին զուգահեռ ընթացիկ աշխատանքներ էլ ունենք, օրինակ՝ Լեւոն Մկրտչեանը Ղարաբաղի մասին գրքոյկ է գրել, որը պէտք է թարգմանուի ֆրանսերէն, անգլերէն, գերմաներէն: Մի խօսքով՝ մեր աշխատանքը հիմա կեդրոնացած է գիտականօրէն հիմնաւորուած, քարոզչական բնոյթի գրականութեան հրատարակութեան վրայ, աւելի ծաւալուելու հնարաւորութիւն չունենք: Եթէ տայ Աստուած, որ հանրագիտարանային էդ տասը հատորները կարողանանք հրատարակել, կը համարենք, որ մեր հաստատութիւնը պարտքը հայ ժողովուրդի առաջ կատարել է, յետոյ կը մտածենք ուրիշ աշխատանքների մասին:

Ժ. Ղ. – Խորին շնորհակալութիւն, սիրելի Էդիկ: Ձեզ կը մաղթեմ բարի երթ:

Է. Յ. - Ողջունում եմ Ձեր ունկնդիրներին, հաւանաբար եկող տարի նորից հանդիպենք, տեսնենք, թէ իմ ասածները որքանով իրականացան, որքանով ես սխալ էի:

Ժ. Ղ. – Յաջողութիւն եւ ցտեսութիւն:

Մայիս 19, 1988
Պոսթոն

ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԵՐԳԸ ՈՐՊԵՍ ՀԱՅ ՄԱՐԴՈՒ ՀՈԳՈՒ ԱՐՏԱՅՈԼՈՒՄ

Մարիամ Կիրակոսյան

Մեր ազգային ազատագրական պայքարի պատմության մեջ իրենց անփոխարինելի տեղն ու նշանակությունն ունեն հայ հեղափոխական երգերը: Այս երգերը ոչ միայն կառուցվածքով ու բովանդակությամբ ուրույն ու չկրկնվող տեսակ են մեր գրականության մեջ, այլև պայքարի ելած ժողովրդի հույզերի դրսևորումն են, նրա հոգու ճիչը, հայրենիքի ոտնահարված իրավունքների վերականգնմանը պահանջատեր լինելու նրա պատրաստակամությունը: Հետևաբար, ազատագրական պայքարի ուսումնասիրման տեսակետից, այս երգերը նվազ կարևորություն չեն ներկայացնում, քան զուտ փաստական նյութերը:

Բովանդակային առումով տարբերվում են պայքարի կոչող, ազատագրական մարտերի հիշարժան դրվագները փառաբանող, առանձին ֆիդայիներին նվիրված, զանգվածային ջարդերն արտացոլող, պանդխտության և այլ երգեր: Ըստ ծագման հեղափոխական երգերը կարելի է բաժանել հետևյալ տեսակների՝ 1) քաղաքային (գրական), 2) աշուղական, 3) ժողովրդական[1]: Քաղաքային ոճի նմուշներն աչքի են ընկնում քայլերգային երաժշտությամբ ու առավել ճոխ բառապաշարով: Աշուղական երգերին բնորոշ է երաժշտության ռիթմային հատուկ շեշտավորվածությունը: Ժողովրդական երգերը պարզ են, խրոխտ, անմիջականորեն արտահայտում են ժողովրդի տեսածը, զգացածը, մտածածը: Անշուշտ, այս երգերն ի սկզբանե ունեցել են հեղինակ (օրինակ՝ հեղափոխական շատ երգերի սկզբնական տարբերակների հեղինակ է համարվում աշուղ Ֆահրատը), բայց ժողովուրդն ընկալել է որպես իրենը, վերարտադրել ու ժամանակի ընթացքում որոշակի փոփոխությունների է ենթարկել: Ուստի ժողովրդական երգերին հատուկ են տեքստային այլևայլ նմուշներ: Ընդ որում, սկզբնօրինակների հեղինակները հաճախ անհայտ են:

---

[1] Տես «Հայկական հարց» հանրագիտարան, Երևան, 1996, էջ 321:

ԴՐՈՇԱԿ

Մշակույթ

Հայ հեղափոխական երգը բնականաբար ունեցել է դարերից եկող իր նախատիպերը: Մ. Խորենացու «Հայոց պատմության» միջոցով մեզ հասած հնագույն վիպերգերից շատերն ունեն ռազմահայրենասիրական բնույթ: Միջնադարում, պետականության կորուսի, օտարի արշավանքների ու ավերածությունների շրջանում, ազգային երգը վերածվեց ազատագրության, նվաճողներին հայրենիքից վտարելու կոչի:

19-րդ դ. 2-րդ կեսին հայության վիճակի վատթարացումն ու հայկական հարցի սրումը համընկավ հայ գրականության ու երաժշտության զարթոնքի հետ: Հայասանի ազատագրության խնդիրն իրենց ստեղծագործություններում արտահայտել են ժամանակի հայ նշանավոր բանաստեղծները, ում գործերն այդ շրջանում կամ հետագայում վերածվել են ազգային երգերի: Այսպես՝ «Մեր հայրենիք», «Ազատություն» (Մ. Նալբանդյան), «Օրորոցի երգ», «Հիմի՞ էլ լռենք», «Հույս» (Ռ. Պատկանյան), «Եղբայր եմք մեք», «Թաղումն քաջորդվույն» (Մ. Պեշիկթաշլյան), «Կիլիկիա» (Ն. Ռուսինյան), «Արիք հայկազունք» (Հ. Սվաճյան) և այլն: Մյուս կողմից, ազգային զարթոնքը, բռնակալության դեմ բողոքի ուժեղացումը, հատկապես՝ Զեյթունի 1862 և 1877-78 թթ. ապստամբությունները, հիմք հանդիսացան բուն ժողովրդական ազատագրական երգերի համար.

Կեցցե՛ Զեյթուն, ապրի՛ Զեյթուն,
Թող չտեսնե ստրկություն.
Քանի ունի մեզ պես որդիք,
Ապրի՛ Զեյթուն, կեցցե՛ Զեյթուն:

Զեյթունցիների նշանավոր

Տ. Չուխաջյան

քայլերգի խոսքերի հեղինակը Հարություն Չագրյանն է (Զեյթունի ազատագրական մարտերի կազմակերպիչներից): Երաժշտական մշակումը վերագրվում է Տ. Չուխաջյանին: Առհասարակ, հայրենիքի ազատագրության հարցն այնպես էր գրավել հայ մտավորականությանը, որ դրսևորվում էր արվեստի, այդ թվում՝ երաժշտության ամենատարբեր ժանրերում: Օրինակ՝ Չուխաջյանի «Լեբլեբիջի Հորհոր աղա» («Կարինե») օպերետի «Լեբլեբիջիների խմբերգը» ազգային ազատագրական երգի նմուշ է.

Մենք քաջ տոհմի զավակներ ենք, չենք վախի,
Մանր-մունր փորձանքներից չենք փախչի.
Մենք դեռ փոքրուց միշտ սիրել ենք քաջություն,
Ինչ էլ որ լինի՝ չենք հանդուրժի պարտություն:

Նույն 19-րդ դ. 2-րդ կեսին, հատկապես՝ Հայկական հարցի միջազգայնացումից հետո, Հայաստանում ու հայաբնակ շրջաններում երևան են գալիս հայրենիքի ազատագրմանը նվիրված հասարակական տարբեր կազմակերպություններ: Այս կազմակերպությունների շարքում իր հզորությամբ ու հետևորդների սվարությամբ հատկապես աչքի էր ընկնում Էրզրումի «Պաշտպան հայրենյաց»-ը՝ հիմնադրված 1881 թ.: «Պաշտպանը» գործնական քայլերի է դիմել հայությանը կազմակերպելու տեսակետից՝ զենք տեղափոխելով Երկիր, բաժանելով ժողովրդին ու զինավարժելով նրան: Սակայն կազմակերպության գոյությունը հայտնի դարձավ օսմանյան իշխանություններին, ինչը առիթ հանդիսացավ Էրզրումում բազմաթիվ երիտասարդների ձերբակալման համար: 1890 թ. հունիսի 20-ին կառավարական զորքերը, զենք գտնելու պատրվակով, ներխուժեցին Էրզրումի հայոց եկեղեցի: Դա այն վերջին կաթիլն էր, որով լցվեց ժողովրդի համբերության առանց այն էլ լի բաժակը: Ժողովուրդն ընդվզեց ու զանգվածային դիմադրության ելավ սրբապղծության դեմ: Այս նախադեպը չունեցող իրադարձությունը չէր կարող իր արձագանքը չգտնել հայ իրականության մեջ: «Ձայն մը հնչեց Էրզրումի հայոց լեռներեն»: Սա այս դեպքի ազդեցությամբ ծնված ու «Պաշտպան հայրենյաց»-ի գործունեությանը նվիրված հեղափոխական հայտնի երգի առաջին տողն է: Այս գեղեցիկ երգը միասնության կոչ է՝ ուղղված համայն հայությանը.

Ցնծա՛, Երկիր, մայր Հայաստան, որդիդ միացան,
Ութ դարերու սուգ ու թախիծ մեզնից վերացան:

Մ. Վարանդյանի դիպուկ բնորոշմամբ. «Ասես հինաւուրց Հայրե-

նիքը իր ալեզարդ լեռներով ու սգաւոր դիւցազուններով մէկէն ի մէկ արթնացաւ լեթարգիական մրափէն - և ցնցող, մրկաբեր ղօղանջով տարածուեցաւ.. ազատութեան նոր ռազմերգը»[2]: «Ձայն մը հնչեց»-ը հայ հեղափոխական առաջին երգերից ամենասիրվածն ու ամենանշանավորն է: Այն հայտնի է նաև հայ շրջաններից դուրս: Վ. Բրյուսովի կողմից այն թարգմանվել է ռուսերեն ու հրատարակվել «Военная эрзрумская песня» վերնագրով[3]:

19-րդ դ. 90-ական թթ. ու 20-րդ դ. սկիզբը դայֆարի բուռն ծավալման ու հայ հեղափոխական երգարվեստի ծաղկման ժամանակաշրջանն է: Մեկը մյուսի ետևից ստեղծվում են ազատագրական մարտերգեր, ՀՅԴ գործունեությունը, ֆիդայիների սխրանքները փառաբանող երգեր: Ֆիդային, որպես հերոսական, հանուն իր ազգի, հայրենիքի, ազատության ու իրավունքների դայֆարի ելած հայ զինվոր, դառնում է ժողովրդի հիացմունքի առարկան, նրա հույսն ու ապավենը օտարի հալածանքների դեմ: «Ձարթնիր, լաո» հանրահայտ երգը, որն անգամ խորհրդային իշխանության տարիներին չի իջել մեր ժողովրդի շուրթերից, նվիրված է առաջին ֆիդայապետ Արաբոյին.

Գոռ տանի քուրդ Հասոյին,
Որ ըսդանեց ջոջ Ախոյին,
Իկաջ մացեր Արաբոյին,
Ձարթնի՛ր, լաո, մռնիմ քի:

«Ձարթնիր, լաո»-ի սկզբնական անվանումներից մեկն է «Մշեցու մոր որորոցային երգը»[4]: Երգի բովանդակությունը ներկայացնում է մոր հորդորն իր զավակին: Արաբոյի կերպարն ընկալվում է որպես իդեալ, ու նրա օրինակով ժողովրդին, մասնավորա-

---

[2] Միքայել Վարանդեան, Հ. Յ. Դաշնակցութեան պատմութիւն, Երևան, 1992, էջ 35:
[3] Տե՛ս Հայ ժողովրդական ռազմի և զինվորի երգեր, Երևան, 1989, էջ 286:
[4] Տե՛ս նշ.տ., էջ 147:


Արաբո

ոլես՝ մասաղ սերնդին, կոչ է արվում «զարթնել», վրեժխնդիր լինել բռնաճնշողներից ու փրկել սեփական ժողովրդին:

«Հայրենասերի կոչը» վերնագիրը կրող երգը ևս ազատագրության ու պայքարի ուղերձ է, այս անգամ՝ Աղբյուր Սերոբի օրինակով.

Վերջապես մենք ունենք կռիվ,
Զենքով պիտի մաքրենք հաշիվ,
Մեր հայրենյաց փառք ու պատիվ՝
Սերոբ փաշին սիրողը գա:

Ֆիդայական շարժման պատմության մեջ Սերոբի կատարած առանձնահատուկ դերով է պայմանավորված և ժողովրդի կողմից տրված «Աղբյուր»՝ կյանք պարգևող, անունը, և այն, որ նրան են նվիրված բազում երգեր՝ «Գնդակ որոտաց նոյեմբեր ամսուն», «Հայրենասերի կոչը», «Աղբյուր ջան», «Աղբյուր», «Սերոբ փաշայի հիշատակին»... Ընդհանրապես, հայ հեղափոխական երգերի շարքում մեծ թիվ են կազմում հենց ֆիդայական երգերը: Գևորգ Չավուշին են ձոնված «Սոսկումն ահավոր», «1907 թվականին», «Գևորգ Չավուշի երգը», Անդրանիկին՝ «Դաշնակցական խումբ», «Անդրանիկին», «Հերոս Անդրանիկին»: «Վերքերով լի ջան ֆեդա եմ» երգը նվիրված է Պետրոս Սերեմճյանին (Բուլղարացի Պետո), «Գարահիսար լեռան կրծքին»-ը՝ Պետոյին (Ալեքսանդր Պետրոսյան): Հայտնի են Նիկոլ Դումանին, Աշոտ Թաքուլին, Վազգենին, Գուրգենին, Հրայր Դժոխքին, Սեբաստացի Մուրադին, Սևքարեցի Սաֆոյին, Քեռիին և ազգային ազատագրական շարժման ականավոր այլ գործիչների ձոնված մեծաթիվ երգեր, որոնք այսօր էլ երգում է մեր ժողովուրդը:

Ազատագրական պայքարը, Հայկական հարցի շուրջ ծավալված քաղաքական իրադրությունը և, առհասարակ, ժողովրդի իղձերն ու ձգտումներն անմիջականորեն արտացոլել են ժամանակի հայ աշուղները: Չիվանին իր «Արդար պահանջ» խոսուն վերնագիրը կրող երգում ասում է.

Ես հայի որդի եմ և հայ եմ ծնվել,
Ուզում եմ հայ արդիլ, հայի պես մեռնել,
Մտքովս չի անցնի ուրիշից բան խլել,
Ես իմ ունեցածս կուզեմ պաշտպանել:

Բայց պայքարել պետք է ոչ միայն արտաքին վտանգի դեմ, այլև «Գաղթականությունն է մեր մեծ թշնամին»: Չիվանու գործերում ստվարաթիվ են գաղթի ու տարագրության երգերը, որոնցում աշուղը և հորդորում է ժողովրդին, ինչ էլ որ լինի, չլքել երկիրը, և պատմում պանդուխտի ծանր վիճակի, առ հայրենիք նրա կարոտի մասին.

Վերիս դեղ ու սղեղանին,
Ախ, իմ հայրենիքիս ջուրը,
Քաղցր է քան նռան գինին,
Ախ, իմ հայրենիքիս ջուրը:

Այնուամենայնիվ, Չիվանին լավատես է. «Չախորդ օրերը ձմռան նման կուգան ու կերթան», և «Մեզի կժամանեն երջանիկ օրեր»:

Աշուղ Շերամի հայրենասիրական քնարերգության առանցքը ևս հայրենիքի ազատագրության խնդիրն է: Նրա գրչին է պատկանում Անդրանիկին նվիրված հայտնի երգը («Իբրև արծիվ սավառնում ես լեռ ու ժայռ»): Սիրված և այժմ էլ իր արդիականությունը չկորցրած երգ է Շերամի «Հայ երիտասարդին»-ը, որն ուղղված է հայության անտարբեր, նեղ անձնականն ազգայինից վեր դասող զանգվածին.

Ամո՛թ ըզքեզ, հազար ամո՛թ,
Որ զենք չունիս քո ձեռին,

Մուրադ



Ասուղ Շերամ

Մինչ եղբայրդ կռվի դաշտում
Կոտորում է թշնամին:

Այս երգ-հորդորը գրվել է արևմտահայերի զանգվածային ջարդերի ողբերգական օրերին: Բայց ինքնապաշտպանական կռիվներն ու վրիժառության ձեռնարկներն ապացուցեցին, որ հայը ոչ միայն զոհ է, այլև ընդունակ է արժանի հակահարված տալու իր դահճին: Ուստի երգի խոսքերը ժողովրդի կողմից ենթարկվել են որոշ փոփոխությունների, և այսօր երգում ենք հետևյալ կերպ.

Անո՛թ քեզի, հազար անո՛թ,
Որ զենք չունես քո ձեռքին,
Քո եղբայրդ կռվի դաշտում
Տաղտալում է թշնամիին:

Ազգային հայրենասիրական երգի քաղաքային (գրական) տիպի նմուշ է ՀՀ օրհներգը (խոսք՝ Մ. Նալբանդյանի, երաժշտություն՝ Բ. Կանաչյանի): Պաշտոնական օրհներգի կարգավիճակ «Մեր հայրենիք»-ը ստացել է 1918 թ. Հայաստանի Հանրապետության հռչակումից հետո: Սակայն, ըստ էության, այն մեզ համար ազգային օրհներգ է եղել և 1915 թ. Վանի ինքնապաշտպանության օրերին, և ավելի վաղ: Ն. Աղբալյանը 1916 թ. գրում է. «25-30 տարի է արդեն, որ հայ աղջիկը եռագույն դրոշներ է կարում, արտասուքով լվանում և հոգով ընկերանում հայրենիքի քաջ որդիներին: Եվ վաղուց է արդեն, որ «Մեր Հայրենիքն» արտացոլում է հայության ազգային զգացումն ու տրամադրությունը»[5]...

Հայ հեղափոխական երգերում խոսում է ինքը՝ ժողովուրդը, ժողովրդի զավակ հայ ֆիդային՝ անկեղծ զինվորի իր առաքելությամբ, «Մահ կամ ազատություն» իր նշանաբանով: Հալածանքն ու բռնությունը հանդուրժելն այլևս անհնար է.

Այսքան ճնշման տակ ինկած է,
Հայը ինչպես դիմանա:

Եվ էլ որ նոպատակին կարելի է հասնել լացով ու աղաչանքով.

Այսքան դար լացինք, ո՞վ էր լսողը.
Մեզ ի՞նչ օգուտ բերեց արցունքի ծովը:

Ու ժողովուրդը հանգում է պարզ, բայց հաստատուն մի ճշմարտության. «Միայն զենքով կա հայոց փրկություն», իսկ նրա մարտիկները մինչև արյան վերջին կաթիլը կռվում են այդ ճշմարտության համար.

Վասն ազատման հայրենյաց
Թափենք մեր վերջին արյուն.
Այս է պահանջում դարը:

Բայց չնայած ոսոխին իրոք սարսափ պատճառող իր ռազմական ուժին, «Կնոջն երբեք ձեռք տալու չէ վրեժխնդիր քաջ ֆեդան»: Հայ ֆիդայու պայքարը վեհ է, և այդ պայքարում

Զիվանի

նրան առաջնորդում է ամենակարևորն ու ամենաբաղձալին.

Լինի առաջնորդ մեզ ազատություն,
Միրուն մեր ազատություն,
Անուշ մեր ազատություն:

Բայց մեր հերոսն իր բնույթով ոչ միայն պայքարող է, այլև հաղթող.

Դաշնակցությունը հաղթեց սուլթանին,
Նոր արև, նոր կյանք պարգևեց հային:

Հենց հաթանակի գիտակցումը հայ հեղափոխական երգերի միջոցով փոխանցվել է հաջորդ սերունդներին, նույնիսկ խորհրդային վարչակարգի օրք, երբ այս երգերը մեծ մասամբ կամ արգելված էին, կամ կատարվում էին տեքստային ակնհայտ աղավաղումներով ու կրճատումներով:

---

5 Նիկոլ Աղբալյան, Ընտրանի, Երևան, 2005, էջ 111

Հենց այս գիտակցությամբ 1988 թ. հայ ժողովուրդը պայքարի ելավ հանուն Արցախի՝ մայր հայրենիքին միացման:

Ազգային երգի նոր վերելքը նշանավորվել է դեռևս 1970-80 ական թթ. սփյուռքում, Հայկական ցեղասպանության Արդարության մարտիկների ու Հայ հեղափոխական բանակի գործողություններով: Այսպես՝ «Հինգ հայ ուրեր», «Հայոց մարտիկներ», «Երգ մեր ուրերու» (Գ. Սարգիսյան).

Հայոց մարտիկներ, հայոց մարտիկներ,
Ռուսոնի ու Դոմանի քաջ որդիներ,
Բռնակալ թուրքը հարվածող տղաք ու աղջիկներ,
Խղճի մարտիկներ, կամքի մարտիկներ:

Իսկ արդեն Արցախյան շարժման, ազատամարտի ու հետագա տարիներին հայ երգիչ-երգահանների ներշնչման աղբյուր են դառնում ինչպես ազատագրական պայքարի նախորդ շրջանի հերոսներն ու գրծիչները՝ «Դրո», «Ջիվանուն» (Աշուղ Գևորգ), այնպես էլ, առավել ևս, արցախյան գոյամարտն իր նվիրյալներով, հանուն հայրենիքի ընկած քաջերի համար հավերժական հանգրվան դարձած Եռաբլուրը: Օրինակները բազմաթիվ են՝ «Ղարաբաղի ազատության մարտիկներ», «Պետոյի հիշատակին», «Եռաբլուր» (Ն. Իսպիրյան), «Գետաշեն», «Շահումյան», «Վեր կաց, Շահեն», «Հայեր, միացեք», «Պատերազմ եք գնում» (Գուսան Հայկազուն), «Արցախի ֆիդայիներին», «Ջինեք, տղաներ» (Գ. Գաբրիելյան), «Երնեկ, թե այս նոր տարին», «Կարմիր կակաչներ», «Որ սարերը չմնան անտեր» (Ռ. Հախվերդյան), «Դուշման Վարդանին», «Եռաբլուր», «Երգող խաչքարեր», «Կարմիր դագաղում» (Դ. Ամալյան), «Արթուրի հիշատակին» (Ս. Երանյան)

Պետրոս Սերեմձյան (Բուլղարացի Պետո)

Հայրենասիրական երգերի կարևորագույն առանցքը շարունակում է մնալ հայոց պահանջատիրությունը.

Երնեկ, թե այս նոր տարին
Ոտքի կանգներ Հայաստան,
Եվ կիսամանդ մեր Կարին
Լիներ քաղաք մեր ոստան:

Այս ազգային պահանջն իրականացնողը հայրենիքի հերոս զավակն է.

Ինչքան էլ որ դժվար լինի, դիմացեք,
Վախկոտն ամեն օր է մեռնում, իմացեք,
Քաջը՝ մեկ անգամ, փառքով, իմացեք,
Հողը արյունով են փրկում, իմացեք:

Չէ՞ որ «Չար դավաճանը հողն է ուրանում, իսկ քաջ ֆիդային՝ իր կյանքը ջահել»: Ուստի միանգամայն օրինաչափ է, որ այսօր էլ շարունակում են երգեր ձոնվել նրանց, ում շնորհիվ այժմ ապրում ենք ազատ հայրենիքում ու աղահով ենք վաղվա օրվա հանդեպ.

Այդ արյունն է ձեր, կռվող տղաներ,
Իր կարմիր գույնով սարերը ներկել,
Դոք որ կյանքը ձեր մեզ տվիք նվեր,
Որ սարերը մեր չմնան անտեր:

Այսպիսով, ազգային հայրենասիրական երգարվեստը զարգանում է ու հարստանում նորանոր երգերով:

Հայ հեղափոխական երգերը լոկ երգեր չեն մեզ համար, այլ նաև ոգևորման աղբյուր: Այս երգերը ուժ են տվել զավթիչների դեմ անհավասար պայքարի դուրս եկած հայ ֆիդայուն. պատահական չէ, որ մեր մարտիկները կռվի դաշտ են ելել այս երգերը շուրթերին: Այսօր, մեր քաջերի արյան գնով ձեռք բերված խաղաղության պայմաններում, այս երգերը շարունակում են ոգեշնչել մեզ: Չնայած խաղաղությունը Հայաստանի համար խիստ հարաբերական հասկացություն է: Ժամ առ ժամ նորանոր խարդավանքներ են նյութվում մեր հայրենիքի դեմ, ինչը մեզնից մշտական զգոնություն ու հետևողականություն է պահանջում: Մեր հողերը տակավին օտարի ձեռքում են, հետևաբար մեր պայքարը դեռևս չի ավարտվել, մենք շարժվում ենք դեպի մեր նպատակը, ու այդ ճանապարհին մեզ մշտապես ուղեկցել, ուղեկցում և ուղեկցելու են մեր երգերը, որովհետև.

Թեկուզ անհաս պարիսպները մեզ
բաժանեն մեր երկրից,
Հով լինի, արև լինի, պիտի գնանք
վաղ թե ուշ:



Վեց օր Արարատի գագաթին

(Նվիրվում է Արարատի գագաթի նվաճման 180-ամյակին)

Վարդան Գրիգորյան

1850 թ. օգոստոսի 6-ին ռուս գնդապետ Իոսիֆ Իվանովիչ Խոծկոյի (մահացել է 1881 թ.) գլխավորած արշավախումբը բարձրացավ Հայկական լեռնաշխարհի ամենաբարձր սարի՝ Արարատի գագաթը (5165 մետր): Դրանից 21 տարի առաջ՝ 1829 թ. սեպտեմբերի 27-ին Արարատի գագաթը նվաճել էր Դորպատի (այժմ՝ Տարտու) համալսարանի պրոֆեսոր Ֆրիդրիխ Պարրոտը (1791-1841 թթ.): Նա առաջինն էր, որ ոտք դրեց Արարատ լեռան գագաթին: Նրա արշավախմբի կազմում էր նաև Խաչատուր Աբովյանը, որին հետագայում վիճակված էր դառնալու հայ նոր գրականության հիմնադիրը: Հայտնի է, որ թե Աբովյանի մասնակցությունը Արարատի նվաճմանը և թե նրա բարեկամությունը Ֆ. Պարրոտի հետ ինչ մեծ դեր խաղացին մեծ լուսավորչի կյանքում:

Հաջորդ լեռնագնացը, որը բարձրացավ Արարատի գագաթը նույնպես Դորպատի համալսարանի պրոֆեսորներից էր՝ գերմանացի երկրաբան, ակադեմիկոս Հերման Վիլհելմ Աբիխը (1806-1886 թթ.): Նա տվել է Արարատի երկրաբանական նկարագրությունը և որոշել լեռան գագաթը տանող ամենամատչելի ուղին: Բացի այդ նա որոշել է նաև գագաթը բարձրանալու ամենահարմար ժամանակը՝ հուլիսի վերջը և օգոստոսի սկիզբը, երբ Հայաստանում սկսվում է բացարձակ հանգիստ, տաք ու անամպ եղանակ: Հ. Աբիխի արշավախմբի կազմում էին նրա ծառայից բացի, թարգմանիչ Պետրոս Շարոյանը, տեղագիր Բոլովինը, երկու հայ գյուղացիներ Նոր Ակոռի գյուղից և չորս կազակներ:

Թե Ֆ. Պարրոտը և թե Հ. Աբիխը Արարատի գագաթին մնացել են շատ կարճ ժամանակ (Ֆ. Պարրոտը մնացել է 45 րոպե), երկար մնալը չափազանց դժվար էր անտանելի ցրտի և քամիների պատճառով: Գագաթը նվաճելուց հետո լեռնագնացները, իրենց գործն ավարտված

Ֆ. Պարրոտ

համարելով, անմիջապես իջել են ցած, բայց գնդապետ Ի. Խոծկոյի աշխատանքն սկսվել է գագաթին հայտնվելուց հետո: Նա մտադրվել էր երկրաբանական ու այլ բնույթի ուսումնասիրություններ կատարել և ամենակարևորը՝ ճշգրտապես որոշել Արարատի բարձրությունը ծովի մակերևույթից:

Գնդապետ Ի. Խոծկոյի արշավախումբը բավականին մարդաշատ էր: Նրա հետ էին նշանավոր արևելագետ Ն. Վ. Խանիկովը (մահացել է 1878 թ.), ռուսական բանակի գլխավոր շտաբի կապիտան, բարոն Պ. Կ. Ուսլյարը (մահացել է 1878 թ.): Վերջինս հետագայում դարձավ Կովկասի լեռնականների լեզվի հայտնի ուսումնասիրողներից մեկը, տեղագիրների կորպուսի կապիտան Ալեքսանդրովը, որը մահացավ դրանից շատ չանցած, հենց 1850 թ., Թիֆլիսի ֆիզիկական աստղադիտարանի տնօրեն Առնոլդ Ֆ. Մորիցը, թարգմանիչ Պետրոս Շարոյանը (դա նրա երկրորդ վերելքն էր Արարատի գագաթը), 60 զինվորներ և կազակներ:

Ռուս կովկասագետ Ե. Գ. Վեյդենբաումը «Մեծ Արարատը և նրա գագաթը նվաճելու փորձերը (1701-ից մինչև 1882 թվականները)» արժեքավոր գրքույկում, որն ունեցել է մի քանի հրատարակություն (ամենավերջինը՝ 1912 թ.), նշում է, թե Ի. Խոծկոյի արշավախումբը վերելքը սկսել է Նոր Ակոռի գյուղի մոտից: Ակոռի հայաբնակ գյուղի բնակիչների մեծամասնությունը զոհվել էր երկրաշարժի ժամանակ, երբ հիմնովին ավերվել էր այդ գյուղը: Ողջ մնացածները (մոտ 150 հոգի) կառուցել էին Նոր Ակոռի գյուղը, որի բնակիչներից ոմանք ակտիվ մասնակցություն էին ունենում դեպի Արարատ շարժվող արշավախմբերին: Ի. Խոծկոն ու նրա ուղեկիցները Նոր Ակոռիից շարժվում են դեպի Երևանի խան Հուսեյնի կառուցած ամառանոցը և նրա մոտ եղող աղբյուրը՝ Սարդար-Բուլաղը, և այնտեղ բանակ դնում: Հայտնի է, որ հայերի մեջ տարածված էր այն համոզմունքը, թե Արարատի գագաթը նվաճելը միանգամայն անկարելի է: Դա համարվում էր սրբապղծություն:

Երբ Ի. Խոծկոն պատրաստություններ էր տեսնում վերելքը սկսելու համար և դեռ գտնվում էր Երևանում, երևանցի մի հարուստ հայ՝ փոստի կառավարիչ Արտեմի Գրիգորի Քալանթարովը հայտարարում է, որ ինքը գրազ կգա 6.000 ռուբլով (այն ժամանակվա համար մի վիթխարի գումար), եթե Խոծկոն կարողանա բարձրանալ Արարատի գագաթը: Իմանալով այդ մասին՝ Կովկասի փոխարքա Վորոնցովը կարգադրում է ճիշտ այդքան գումար դնել Երևանի գանձատունը՝ պայմանով, որ 12.000 ռուբլին անցնի գրազը շահած կողմին: Քանի որ դժվար կլիներ համոզել Արտեմի Քալանթարովին, որ ինքն իրոք բարձրացել է Արարատի գագաթը, Ի. Խոծկոն կարգադրում է Երևանի բերդի պատուհաններից մեկի վրա, որտեղից լավ երևում էր Արարատի գագաթը, դնել հեռադիտակ և այն ուղղել Արարատի կողմը: Իսկ ինքը տանելու էր իր հետ մի մեծ հայելի, որն ար-

տացոլելով արևի լույսը՝ կվկայեր, որ ինքն իրոք բարձրացել է լեռան գագաթը:

Իմանալով այդ մասին՝ Ա. Քալանթարովը հրաժարվում է իր առաջարկած գրավից՝ մեծ անբավականություն պատճառելով իշխան Վորոնցովին (տե՛ս Ի. Ի. Խոծկոյի «Զեկույց 1850 թ. Մեծ Արարատի վերելքի մասին», Ռուսական տեխնիկական ընկերության կովկասյան բաժանմունքի զեկուցագրերում, XIII հատոր, Թիֆլիս, 1876, ռուս.):

Սարդար-Բուլաղի ճամբարում արշավախումբը մնում է համարյա երկու շաբաթ և զբաղվում վերելքը նախապատրաստելու աշխատանքով: Դա փաստորեն կլիմային և բարձրությանը հարմարվելու հրաշալի հնարավորություն էր, որն իր դրական ազդեցությունն ունեցավ վերելքի հաջողության վրա:

Արշավախմբի անդամներից մեկը՝ զինվոր Չուգունկովը, հուլիսի 25-ին իր երկու ընկերների հետ բարձրանում է Արարատի գագաթը և այնտեղ ամրացնում կեչու փայտից պատրաստված նշանաձող:

Օգոստոսի 1-ին սկսվում է վերելքը: Սկզբում ընթանում էին ուղեկցողները Նոր Ակոռի գյուղից՝ Սիմոն Սարգսյանը (որն ուղեկցել էր ակադ. Աբիխին) և Հունան Ավագյանը: Խ. Աբովյանին, Պ. Շարոյանին և Պարրոտին ուղեկցող երկու հայ գյուղացիների հետ սրանք առաջին հայ լեռնագնացներն էին: Սիմոնը տանում էր փայտից պատրաստված մի մեծ խաչ: Գործիքները և բեռները դրված էին ձիերի և քարշակների վրա: Նրանց ետևից կազակները քաշում էին սահնակները, որոնց վրա դրվելու էին բեռները, երբ ձիերը չէին կարողանա շարունակել ճանապարհը: Ե. Գ. Վեյդենբաումը գրում է, որ մինչ այդ ոչ մի արշավախումբ այդպիսի պատրաստությամբ չէր բարձրացել Արարատի նման բարձրություն ունեցող սարի վրա:

Չնայած արշավախումբը գնում էր Հ. Աբիխի նշած ուղիով, բայց ծանր բեռների առկայությունը զրկում էր նրանց վերելք իրականացնել ժայռոտ տեղանքում: Հետո ձիերը հրաժարվեցին առաջ գնալ: Նրանցից մեկը սահեց և ընկավ սառույցների վրա: Մեծ դժվարությամբ հաջողվում է փրկել նրան: Բեռները փոխադրում են սահնակների վրա, իսկ ձիերն ուղարկում ներքև: Սահնակները քաշում էին 6 կազակներ:

Հ. Աբիխ

11 ժամից հետո արշավախումբը կանգ է առնում գիշերելու: Գիշերով երկինքը ծածկվում է մռայլ ամպերով, սկսվում է ամպրոպ ու կայծակ, որոնց հետևանքով լեռնագնացները չկարողացան կարգին հանգստանալ: Չնայած դրան, օգոստոսի 2-ին վերելքը շարունակվում է: Կեսօրին անցնում են Հ. Աբիխի ծառայի՝ Կարլ Ցենկի դրած խաչի մոտով: Խոծկոն ցանկանում է այդ խաչը տեղափոխել Արարատի գագաթը, բայց նա այնքան ամուր էր խրված ձյան մեջ, որ անհնարին եղավ նրան հանել տեղից: Վերելքը շատ դանդաղ էր ընթանում, դժվարացնում էր գործը հատկապես սահնակներ քաշելը: Ձյունը փխրուն էր, կազակները խրվում էին նրա մեջ մինչև ծնկները: Նրանք ստիպված էին լինում նախապես ոտքերով ամրացնել ձյունը և հետո

քաշել սահնակները: Եղանակը գնալով վատանում էր: Ձյան մրրիկը ուժեղանում էր: Ժամը 3-ին Խոծկոն հրամայում է կանգ առնել, սահնակները դեն են նետում: Արշավախմբի անդամները քամուց ազատվելու համար ապավինում են ժայռերի պաշտպանությանը: Ուղեկցողները և կազակներն իջնում են Թաշ-Քիլիսայի ճամբարը, որտեղ մի վրան էին թողել:

Երեկոյան ժամը 10-ին փոթորիկն ավելի է ուժեղանում: Ամպրոպների հարվածները հետևում էին կայծակներին: Գիշերը կայծակը հարվածում է ժայռերի կատարին: Օգոստոսի 3-ի կեսօրին զինվորները բերում են 2 վրան, բայց քամիների պատճառով անհնարին է լինում դրանք բացել ժայռերի արանքում: Ի. Խոծկոն 4 զինվորների հետ բարձրանում է վեր և հարմար տեղ գտնում վրանների համար: Արշավախումբն այդ վայրին տալիս է «Սարսափելի ճամբար» անունը: Նրանք այնտեղ հարկադրված են լինում մնալ երեք օր: Օգոստոսի 5-ին, կեսօրից հետո, եղանակը լավանում է և հաջորդ օրը առավոտյան ժամը 8-ին արշավախումբը շարունակում է վերելքը: Մեկ ժամ անց Ի. Խոծկոն հասնում է Չուգունկովի դրած նշանաձողին: Մեկ ժամ հետո Ի. Խոծկոն արդեն Արարատի արևմտյան գագաթի վրա էր, ուր 21 տարի առաջ ոտք էր դրել Ֆ. Պարրոտն իր ուղեկցողներով: Այդտեղ դնում են սև գույնի ներկված փայտե խաչ, որը հասցրել էր ուրյադնիկ Դախնովը: Խաչի վրա ամրացված էր պղնձե տախտակ, որի վրա գրված էր. «1850 թ. օգոստոսի 6/18-ին Նիկոլայ I կայսեր բարեհաջող թագավորության, Կովկասի փոխարքա Վորոնցովի իշխանության ժամանակ, Արարատի գագաթն են բարձրացել գնդապետ Խոծկոն, Ն. Վ. Խանիկովը, Պ. Ն. Ալեքսանդրովը, Ար. Ֆ. Մորիցը, Պ. Կ. Ուսլյարը, Պ. Ի. Շարոյանը և 60 զինվորներ»:

Հաջորդ օրը (օգոստոսի 7-ին) գագաթ են հասցվում բոլոր անհրաժեշտ գործիքները և սկսվում են օդերևութաբանական դիտարկումները, որոնք շարունակվում են մինչև օգոստոսի 12-ը: Արշավախմբի անդամները մերթ իջնում էին ստորին ճամբարը, մերթ էլ, անհրաժեշտության դեպքում, բարձրանում վերև: Բայց Ի. Խոծկոն այդ ընթացքում մշտապես մնում էր լեռան գագաթին, մի բան, որ ալպիական ճանապարհոր-



Արարատը, 1973 թ.

դությունների համար նմանը չունեցող եղելություն էր: Գիշերելու համար լեռան կատարին, ձյան մեջ, փորվել էր մի խոր փոս, որի մեջ դրվել էր ալժիրյան գորգերից պատրաստված մի վրան: Մուտքի մոտ դրված է եղել չորսու, որի վրա ամրացված է եղել ծանրաչափ: Մյուս վրանը, որը ճիշտ նման էր առաջինին, հատկացված էր խոհարար զինվորին: Կերակուրը պատրաստել են ածուխի վրա: Ի դեպ, Արարատի գագաթին կրակը վառվել է մեծ դժվարությամբ՝ հավանորեն թթվածնի պակասի հետևանքով: Նրանց հետ վերցված գինին սառել էր: Խմում էին թեյ, օղի, եռացրած ջրով բացված պորտեր (սև գարեջուր) և հալած ձյուն:

Երկրաբանական դիտարկումները, որոնք վերելքի գլխավոր նպատակն էին, կատարվում էին ամեն օր առավոտյան և շարունակվում անընդմեջ՝ 3-4 ժամը մեկ, մինչև որ լեռան կատարը ծածկվում էր ամպերով: Եղանակը հրաշալի է եղել: Ամեն առավոտ Խոծկոն հնարավորություն ուներ հիանալու չորս կողմը բացվող սքանչելի տեսարաններով: Հեռվում 400 վերստ տարածության վրա երևում էր ոչ այնքան հստակ էլբրուսը, ավելի մոտ է եղել (290 վերստ) Կազբեկը: Երևացել է նաև Մեծ Կովկասի լեռնաշղթան, որը ձգվում էր Սև ծովից մինչև Կասպից ծով: Հարավից, Պարսկաստանի տարածքում, երևացել է Սավալան լեռը, հարավում՝ Վանա լիճը, Նեմրութ սարը և Հայկական լեռնաշխարհի մյուս գագաթները: 5-օրյա ուսումնասիրությունների շնորհիվ Խոծկոն հավաքել էր նշանակալի թվով երկրաբանական և գեոդեզիական նյութեր: Նրանք իջել են Արարատի գագաթից օգոստոսի 12-ին: Ի. Խոծկոյի երկրաբանական դիտարկումները հրատարակվեցին 1861 թ. հուլիսի 5-ին Թիֆլիսում՝ աշխատակցությամբ Առնոլդ Մորիցի: Այդ դիտարկումները հնարավորություն տվեցին մեծ ճշտությամբ որոշելու Արարատի բարձրությունը ծովի մակերևույթից: Դա հավասար էր 5165 մետրի:

Ի. Խոծկոյի վկայությամբ Արարատի գագաթը բարձրացած իր ուղեկիցները վերելքի ժամանակ իրենց ամենևին վատ չեն զգացել: Արարատի գագաթին գտնված սկզբի 2 օրերի ընթացքում (օգոստոսի 7-ին և 8-ին) Խոծկոն մարմնում թուլություն է զգացել, կուրծքը սեղմ-

Պատկեր տիեզերքից

ված է եղել, գլխացավեր է ունեցել: Արագացված շարժումների ժամանակ շնչահեղձություն է զգացել: Բայց այդ ամենն աստիճանաբար անցել է օգոստոսի 9-ին: Ճամբար վերադառնալուց հետո Խոծկոն զգացել է, որ իր երկու ոտքերը սառել են: Դրա հետևանքով առաջացած ուռուցքներն անցել են վեց շաբաթ հետո:

Գնդապետ Ի. Խոծկոն նկատել է, որ Արարատի գագաթի ձյունապատ մասում բնությունն այնքան էլ մեռած չէ, ինչպես կարելի էր սպասել: Հալեցրած ձյունն իր մեջ պարունակել է կանաչավուն թելիկներ, ինչպիսիք լինում են լճացած ջրերի և հանքային աղբյուրների մեջ: Գագաթի հարավային ստորին մասում Խոծկոն գտել է մանր, վարդագույն ծաղիկներ:

Ե. Վեյդենբաումը դա բացատրում է Արարատի գագաթի մոտ ժայռերի առկայությամբ: Մուգ, համարյա սև գույնի ժայռերը նպաստում են ջերմության կլանմանը, որոնք և բարեհաջող պայմաններ են ստեղծել Խոծկոյի տեսած բույսերի համար:

Նույնիսկ կենդանական աշխարհը լիովին չի բացակայել գագաթից: Ճիշտ է, 6 օրերի ընթացքում Խոծկոն չի տեսել ոչ մի թռչուն, բայց օգոստոսի 9-ի առավոտյան նա հիացել է երկու տուրերով (կովկասյան քարայծեր), որոնք հայտնվել էին հարավային գագաթին:

Ավարտելով վերելքը՝ Խոծկոն և Խանիկովը մեկնում են էջմիածին: Ներսես կաթողիկոսը սիրով ընդունում է նրանց և հետո, երբ նրան հարցնում են՝ ճի՞շտ է, որ երկու պարոններ բարձրացել են Արարատի գագաթը, նա պատասխանել է, որ նրանք դա հաստատում են, իսկ ինչո՞ւ նրանց չհավատալ:

Արարատի նկատմամբ հարյուրամյակներ շարունակ հետաքրքրությունը չի նվազում: Կարծում ենք, որ Ի. Խոծկոյի և Ե. Վեյդենբաումի հրապարակումները արժանի են հայերեն թարգմանության և հրատարակության՝ որքան հնարավոր է մեծ տպաքանակով:

№ 10—11 (207) XIX ՏԱՐԻ ՀՈԿՏԵՄԲԵՐ—ՆՈՅԵՄԲԵՐ 1909

Droschak"
ORGANE
e la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՕՇԱԿ

Adresse:
RÉDACTION DU JOURNAL
„Droschak"
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ" ՕՐԳԱՆ

Ե. Ընդհանուր Ժողովը

Երկունքի այս ծանր օրերում, յեղափոխական ու հակայեղափոխական հոսանքների սուր ու համատարած բախումների միջոցին, Դաշնակցութիւնը գումարեց իր հինգերորդ համաժողովը և ձևակերպեց իր տակտիկը հայկական իրականութեան հանդէպ – իր ուժի ու հեղինակութեան, իր կատարած ու կատարելիք դերի հպարտ գիտակցութեամբ:

Երբէք կուսակցական մի համագումար չէր հրաւիրուել այսքան խորհրդաւոր ու ծանրակշիռ պարագաներում: Տրամադրութիւնները – խառն, երերուն, ինչպէս կացութիւնը... Մի կողմից բերկրանքի ու լաւատեսութեան զարթ շեշտեր, միւս կողմից՝ դողացնող անհանգստութիւն և յոռետես նախազգացումներ: Իրականութիւնը արդարացնում է և այս և այն...

Առաջին անգամը հայ մարտական կուսակցութիւնը գալիս էր արձանագրելու մի մեծ, պատմական իրողութիւն, առաջին անգամը նա գալիս էր ազդարարելու, որ հայ երկրի բոլոր երեք հատուածները փարել են սահմանադրական ազատութեան դրօշակին, որ հայ դժբախտ ժողովրդի բոլոր երեք բեկորները՝Թուրքիայում, Ռուսաստանում, Պարսկաստանում – դարեր շարունակ հալածական ու գերի, դարեր շարունակ կորցրած իրենց անկախութիւնը, այսօր գտնւում են վերջապէս, քաղաքական վերածնութեան պրոցէսի մէջ...

Այդպէս է ներկայի մեծագոյն իրողութիւնը, որքան էլ ուժգին ղօղանջեն յոռետեսութեան ահազանգերը, որքան էլ ուժգին փչեն հիւսիսային հողմերը... Եւ այդ իրողութեան գիտակցումը խոր ու իրաւացի գոհունակութիւն է պատճառում, բնականաբար, նախ և առաջ այն կուսակցութեան շարքերում, որը ամեն տեղ, թէ Թիւրքիայում, թէ Կովկասում, թէ Իրանում,- պատմականօրէն ստանձնած իր միսսիօնի զօրութեամբ – պարզել է իր դրօշակը, ծաւալել է իր գործունէութիւնը, խթանել է ընդհանուր, համապետական վերածնութեան շարժումներին, տուել է թանկագին, անմոռանալի զոհեր...

Ամէն տեղ – նոյն, ընդհանուր, ամբողջական Նպատակի հետապնդումը. ամեն տեղ՝ նոյն հարազատ ժողովրդի առաջադիմութեան ու բարգաւաճման Նշանաբանը:

Արիւնի, շահերի, նպատակի ու տենչանքների այդ միութեան գիտակցութիւնը շեշտել է Դաշնակցութեան բոլոր Ընդհանուր Ժողովների մէջ, նա շեշտեց ուժգնութեամբ և վերջինի մէջ: «Սեպարատիզմ» չը կայ միևնոյն ազգի, ժողովրդի փշրանքների միջև,- նրանք բոլորն էլ միևնոյն ընդհանուր օրգանիզմի անհրաժեշտ մասնիկներն են, կոչուած աշխատելու թև թևի՝ համաշխարհային կուլտուրական սանդուխքի աստիճաններով, մինչև լաւագոյն, բաղձալի համայնակենցաղը, երբ ազգի շահը կը զուգադիպի, կը ներդաշնակի մարդկութեան շահի հետ...

Հինգերորդ համագումարը շեշտեց նաև, եթէ կարող ենք այսպէս ասել, «ազգ» հասկացողութեան ծուծը, նրա իրական բովանդակութիւնը: Նա ծանրանում է ամեն քայլափոխում – թէ իր խմբագրած «Յայտարարագիրների» և թէ ընդունած որոշումների մէջ - ժողովրդի, աշխատաւոր ու կեղեքուած ընդհանրութեան շահերի վրայ. այդ է կուսակցութեան կենտրօնական մտահոգութիւնը, և դա բխում է նրա ծրագրից, նրա քսանամեայ աշխարհայեացքից:

«Դաշնակցութիւնը, նախանձախնդիր հայ ժողովրդի ներդաշնակ և անարգել զարգացման, պիտի պաշտպանէ մեր ազգային-կուլտուրական բոլոր հիմնարկութիւնները, պիտի հովանաւորէ ժողովրդական բոլոր Իրաւունքները...

«Ժողովրդապետութիւն – հիմնուած Աշխատանքի գաղափարին վրայ...

«Ռամկապետութեան հաստատումը՝ միապետութեան փոխարէն, աշխատանքի գերիշխանութիւնը՝ դրամի գերիշխանութեան փոխարէն»:

Ժողովուրդն է «ազգի» սուբստանցը, նրա շահերն են մեզ համար թանկ ու նուիրական, նա է մեր բոլոր խորհրդածութիւնների ու ճիգերի առանցքը և ոչ այն տզրուկ դասակարգերը – կղեր, աղաներ, վաշխառուներ և այլն,- որոնք, իրենց վարձկան փաստաբաններն ունենալով մամուլի, գրականութեան և ուրիշ ասպարէզներում, միշտ յաւակնել են մենաշնորհ դարձնել «ազգ» գաղափարն ու ազգային գործունէութիւնը, միշտ ձգտել են առնել իրենց «հայրական» խնամակալութեան տակ խեղճ ու տգէտ ընդհանրութիւնը, ոչ թէ նրան իրօք պաշտպանելու, նրա համար զոհաբերելու, տանջելու, այլ միայն ու միայն շահագործելու – իրենց դիրքի ու գրպանի համար – այդ ընդհանրութեան տգիտութիւնն ու աշխատանքը: Այդ տարրերի դէմ Դաշնակցութիւնը կարող է միայն մէկ նշանաբան, մէկ ընթացք ունենալ - անհաշտ կռիւ: Այդպէս է նրա ըմբռնումը «ազգի» մասին: Այդ կէտում նա «սեպարատիստ» է, «անջատական»՝ անպայմանօրէն, անվերածելիօրէն:

Մարիամ Հովսեփյան

ՀՅԴ Կ. Պոլսի դարբերական մամուլը
(1909-1924 թթ.)

ՄԱՐԻԱՄ ՀՈՎՍԵՓՅԱՆ

ՀՅԴ Կ. ՊՈԼՍԻ
ԴԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԸ
(1909 -1924 ԹԹ.)

ԵՐԵՎԱՆ 2009

Չնայած հանգամանքին, որ բազմաթիվ հայ հեղինակներ են անդրադարձել ՀՅԴ դարբերական մամուլին, այսուհանդերձ Դաշնակցու-թյան դատության հետ ամենասերտ առնչություն ունեցող այդ բնագավառը շարունակում է մնալ մինչեւ վերջ չուսումնասիրված ու արժանիորեն չգնահատված: Եթե հաշվի առնենք ՀՅԴ դարբերական հրատարակությունների ողջ ծավալը, ընդգրկուն աշխարհագրությունը, նրանց դատուհասած ճակատագրերը, ժամանակի հայտնի զարգացումները, նաեւ ոլորտների բազմազանությունը, հնարավոր էլ չէ դատկերացնել մի ավարտուն աշխատություն, որտեղ մեկտեղված լինի այս ամենը: Հենց միայն ներկայացվող գրքի հեղինակ, բանասիրական գիտությունների թեկնածու Մարիամ Հովսեփյանի այն դիտարկումը, թե իրեն չի հաջողվել նույնիսկ ամբողջացնել դահոցներում առկա որոշ հրատարակությունների բոլոր համարները, արդեն իսկ խոսում է այն մասին, որ գոնե գրեթե չուսումնասիրված ՀՅԴ Կ. Պոլսի դարբերական մամուլի մասին վերջնական ու համադարփակ գիտական աշխատություն ստեղծելը կապված է զգալի, եթե չասենք անհաղթահարելի դժվարությունների հետ: Այդուհանդերձ, ուրախալի է, որ մեր գիտնականների կողմից կա ձգտումը, թեկուզ աշխարհագրական տարանջատումների եղանակով, մասնակի ուսումնասիրություններով ամբողջացնելու դատկերը, գնահատելու մինչ այս եղած թեր ու դեմ կարծիքները, բացատրելու կողմնակալ ուսումնասիրությունների թերու- թյուններն ու ցերեկվա լույսի տակ ներկայացնելու այն ճանապարհը, որ անցել է Դաշնակցության մշտական ուղեկից դարբերական մամուլը:

ԳԱԱ դատության ինստիտուտի հրատարակած «ՀՅԴ Կ. Պոլսի դարբերական մամուլը (1909-1924 թթ.)» գիտական ուսումնասիրությունը Մեսրոպ արքեպիսկոպոս Աշճյանի անվան մատենաշարի 48-րդ գիրքն է: Այն ներկայացնում է ՀՅԴ Կ. Պոլսի դարբերական մամուլի օրգանները, որոնք հրատարակվել են երկու փուլով՝ 1909-1915 եւ 1918-1924 թթ.: Այս բաժանումը հեղինակը դատահական չի կատարել: Բանն այն է, որ իրավիճակի փոփոխության հետ փոխվել են նաեւ կուսակցական եւ առհասարակ հայ մամուլին ներկայացվող դահանջները: Այսդես. եթե հրատարակության 1-ին փուլում ՀՅԴ Կ. Պոլսի դարբերականների առաջնահերթ նդատակները կուսակցության ծրագիրն ու գաղափարները, հասարակական-քաղաքական, գրական-մշակութային տարաբնույթ հիմնահարցերի նկատմամբ ունեցած տեսակետները եւ մոտեցումներն ընթերցողներին ներկայացնելն էր, ապա 2-րդ փուլում ՀՅԴ դարբերականների ուշադրության կենտրոնում կուսակցական եւ քաղաքական խնդիրները չէին, այլ՝ հայադահդանությունը, Հայոց ցեղասդանության միջազգային

ճանաչման ու դասաղարման համար սկսված գործընթացը, Հայաստանի առաջին հանրապետության հեռ կաղերի հաստատումը եւ հնարավորության սահմաններում հայրենիքին օժանդակելը:

Գրքի առաջաբանում հեղինակը խոստովանում է, որ ուսումնասիրությունները կատարվել են պարբերականների՝ Հայաստանում գտնվող հավաքածուների հիման վրա: Դրանք, սակայն, ոչ ամբողջությամբ, ոչ բոլոր համարներով են մեզ հասել ու պահպանվել՝ ամենքին հայտնի պատճառներով. պեսականության բացակայություն, անկայուն քաղաքական իրադրություն, աննպաստ պատմական հանգամանքներ, Ցեղասպանություն: Այնուամենայնիվ, դրանց մեծ մասը ժառանգվել է մեզ, եւ հնարավորություն է ընձեռվել ընդհանուր առմամբ կարծիք կազմել ՀՅԴ Կ. Պոլսի պարբերական մամուլի մասին: Ավելացնենք նաեւ, որ աշխատության ստեղծման նպատակներն իրականացնելու համար իբրեւ սկզբնաղբյուր օգտագործվել են արխիվային նյութեր, ժամանակակիցների, առավելապես ՀՅԴ ակնառու գործիչներից, մտավորականներից եւ «Ազատամարտ» օրաթերթի աշխատակիցներից շատերի հուշագրությունները ու աշխատությունները, նաեւ՝ ՀՅԴ գործելակերպը քննադատող հոդվածներ, գրքեր: Հեղինակին հաջողվել է ՀՅԴ Կ. Պոլսի պարբերական մամուլի օրգաններին զուգահեռ ներկայացնել 20-րդ դարի սկզբի արեւմտահայ իրականու- թյան առավել հանգուցային խնդիրների վերլուծությունը՝ ելնելով ՀՅԴ Կ. Պոլսի պարբերական մամուլում դրանց նկատմամբ դրսեւորված դիրքորոշումից եւ ներկայացնելով ժամանակի ակնառու դաշնակցական գործիչների ու հայ մտավորական սերունդի տեսակետները կարեւորագույն հարցերի վերաբերյալ: Միայն «Ազատամարտ» օրաթերթում իրենց հրապարակումներով հանդես են եկել Ռուբեն Զարդարյանը, Գեղամ Բարսեղյանը, Շավարշ Միսաքյանը, Հակոբ Սիրունին, Խաչատուր Մալումյանը (Ակնունի), Հարություն Շահրիկյանը (Ատոմ), Գրիգոր Զոհրապը, Սիամանթոն, Դանիել Վարուժանը, Ավետիք Իսահակյանը, Ռուբեն Սեւակը, Գեղամ Տեր-Կարապետյանը (Տատրակ), Արշակ Վռամյանը, Մելքոն Կյուրճյանը, Միքայել Վարանդյանը, Լեւոն Շանթը, Հայկ Թիրաքյանը (Հրաչ) եւ ուրիշներ: Այս թվարկումն իսկ բավական է պատկերացում կազմելու այն մասին, թե ինչ դերակատարություն է ունեցել ժամանակի պոլսահայ մամուլը հայ իրականության մեջ:

Մարիամ Հովսեփյանի այս աշխատությանն առավել ընդգրկուն գնահատական տալու պատիվը զիջելով մեր պատմաբաններին, ժուռնալիստիկայի բնագավառի մասնագետներին, ասենք միայն, որ «ՀՅԴ Կ. Պոլսի պարբերական մամուլը (1905- 1924 թթ.)» գրքում առաջին անգամ փորձ է արվել գիտական ուսումնասիրության շրջանակներում ներկայացնել 20-րդ դարի սկզբին Կ. Պոլսում հրատարակված ՀՅԴ մամուլի ուրվագիծը, թեմատիկ ստորաբաժանումները, այդ պարբերականների էջերում քննարկվող հիմնահարցերը: Հեղինակը հանդես է բերել ուսումնասիրվող թեման գիտականորեն մշակելու եւ վերլուծելու կարողություն եւ հմտություն՝ առանձնացնելով մեծածավալ նյութի հիմնական ու երկրորդական թեմաները:

Էդիկ Անդրեասյան



Ռուբեն Ադալյան

Ռուբեն Ադալյան - 80

Վերջերս Հայաստանի նկարիչների միության ցուցասրահում և ժամանակակից արվեստի թանգարանում, հանրությանը ներկայացվեց ՀՀ ժողովրդական նկարիչ, պետական մրցանակի դափնեկիր Ռուբեն Ադալյանի շուրջ 350 գեղանկար ու գրաֆիկական աշխատանքների ցուցահանդեսը՝ նկարչի ծննդյան 80-ամյակի առթիվ:

"Այս նկարները հպարտության զգացումով են լցնում մեր հոգիները, - ցուցահանդեսի առիթով ասել է Արա Շիրազը, - և առարկայորեն փաստում այն իրողությունը, որ Ռուբեն Ադալյանի ողջ ստեղծա-գործությունը վերջին հինգ տասնամյակների ակնառու նվաճումներից է":

«Դրօշակ»-ը շնորհավորում է նշանավոր վարպետին հոբելյանի կապակցությամբ և մաղթում հաջառողջություն, ստեղծագործական շարունակելի ճանապարհ:

ԴՐՈՇԱԿ

Պատկերասրահ







ԴՐՈՇԱԿ







Armenians valiantly defending Baku against the Tartars. Taken from "